Ազգ
Azg
7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 221(4839)
ISSN: 1829-1651

# Մարզերում իրականացվող ծրագրերը կբերե՞ն որակական փոփոխությունների

## *Վերջին տարիներին կատարվել են տասնյակ միլիարդների ներդրումներ*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Այսօր լրանում է 1988-ի երկրաշարժի հերթական տարելիցը, երկրաշարժ, որը Հայաստանի մի զգալի հատված վերածեց աղետի գոտու: Անօթեւան մնացին հարյուր-հազարավոր մարդիկ, որոնց բնակարանային խնդրի լուծման ուղղությամբ լուրջ քայլեր սկսվեցին իրականացվել միայն վերջին մի քանի տարիներին: Աղետի գոտու վերականգնման խնդիրը կարեւորվում է նաեւ Հայաստանի տարածքների համաչափ զարգացման համատեքստում:

2008-ին Հայաստանի կառավարությունը աղետի գոտում անօթեւան բնակիչների բնակարանային խնդրի վերջնական լուծման ծրագիր մշակեց: Այդ ծրագրով 2008-2011-ին պետբյուջեից հատկացվեց 76 մլրդ դրամ, որով պետք է բնակարաններ կառուցվեին անօթեւան շուրջ 4860 ընտանիքների համար: 2009-ից սկսվեցին մեծածավալ շինարարական աշխատանքները: Երկու տարվա ընթացքում կատարվեցին 49,5 մլրդ դրամի ներդրումներ եւ բնակարաններ ստացան 1566 ընտանիքներ: 2011-ին պետական ներդրումները աղետի գոտում շարունակվեցին, իրականացվեցին եւս 26 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ եւ բնակարաններ ստացան եւս 3223 ընտանիքներ: 2012-ին ծրագիրը նախատեսվում է շարունակել եւ բնակարանով ապահովել 1720 ընտանիքի, դրանով իսկ վերջնականապես լուծելով աղետի գոտում երկրաշարժի հետեւանքով անօթեւան դարձածների բնակարանային հարցը:



*Գյումրիի քաղաքապետարանի այս շքեղ շենքը դեռեւս չի կարող դառնալ աղետի գոտու վերակառուցման խորհրդանիշ:*

Սակայն տարածքային համաչափ զարգացումը միայն աղետի գոտով չի սահմանափակվում: Քաղաքաշինական ծրագրեր են իրականացվում նաեւ այլ մարզերում, առաջնահերթությունը տալով վթարային վիճակում գտնվող կառույցներին:

Տես էջ 3

# Հեռուստամարաթոն 2011. 12 286 478 ԱՄՆ դոլարի նվիրատվություն եւ նվիրատվության խոստում

**Երեւան, 6 դեկտեմբերի, 2011թ.: «Հայաստան» համահայկական հիմնադրամը հեռուստամարաթոն 2011-ին նվիրաբերված գումարները կուղղի Հայաստանում եւ Արցախում ջրամատակարարման ենթակառուցվածքների կառուցմանն ու վերակառուցմանը, ինչպես նաեւ կայուն զարգացման ծրագրեր իրականացնել գյուղական համայնքներում:**

**Ստորեւ ներկայացված է հեռուստամարաթոն 2011-ի հանգանակությունների բացվածքը ըստ երկրների: Հիմնադրամի դրամահավաք-ճաշկերույթից հետո կհրապարակվի ամբողջական ցանկը: Հեռուստամարաթոն 2011-ի խոշոր նվիրատուների ցուցակը ամփոփվում է եւ կհրապարակվի դեկտեմբերի վերջին:**

| Երկիր | Գումար (ԱՄՆ դոլար) |
| --- | --- |
| Հայաստան | 2 461 638 |
| ԼՂՀ | 1 013 170 |
| Ֆրանսիա | 3 671 250 (ներառյալ 500 000 եվրոն՝ նվիրաբերված Օ-դը-Սեն նահանգի /նահանգի գլխավոր խորհրդի նախագահ Պատրիկ Դեւեջյան/ կողմից եւ 970 000 եվրոյի նպատակային նվիրատվությունը՝ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք գյուղի դպրոցի կառուցման համար) |
| Գերմանիա | 114 000 |
| Հոլանդիա | 62 000 |
| Շվեյցարիա | 34 000 |
| ԱՄՆ Արեւելյան ափ | 500 000 |
| ԱՄՆ Արեւմտյան ափ | 2 610 420 |
| Արգենտինա | 500 000 |
| Բրազիլիա | 100 000 |
| Ավստրալիա | 60 000 |
| Կանադա/Տորոնտո | 600 000 |
| Կանադա/Մոնրեալ | 120 000 |
| Մեծ Բրիտանիա | 210 000 |
| Կիպրոս, Հունաստան | 100 000 |
| Լիբանան | 90 000 |
| Իրան | 40 000 |
| Ընդամենը՝ | 12 286 478 |




# Երկրի նման մոլորակ

**Ամերիկյան օդատիեզերական գործակալության՝ NASA-ի գիտնականները հայտնաբերել են Երկիրը հիշեցնող մոլորակ: Մեզանից 600 լուսատարի հեռավորության վրա գտնվող այդ երկնային մարմինը հաջողվել է տեսնել «Կեպլեր» աստղադիտակի միջոցով: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ նորահայտ մոլորակը մոտավորապես երկուսուկես անգամ մեծ է Երկրից, ունի իր Արեգակը, որի շնորհիվ միջին ջերմաստիճանը ըստ Ցելսիուսի 22 աստիճան տաքություն է: Բայց գիտնականների կարծիքով գլխավորն այն է, որ նորահայտ մոլորակի վրա կարող է լինել ջուր, հետեւաբար նաեւ կյանք: Հետազոտությունները շարունակվում են:**

**Աստղագետների հաշվարկների համաձայն, ընդհանուր առմամբ գոյություն ունի կյանքի համար պիտանի հինգ տասնյակ մոլորակ:**

# «Նախապետի կանխատեսումը»

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Ադրբեջանի «քաղաքագիտական մտքի նահապետ» Վաֆա Գուլուզադեի արտառոց հայտարարություններին մենք մեկ անգամ չէ, որ անդրադարձել ենք: Պետք է պարզապես ափսոսալ, որ սույն «խորհրդատակը» ոչ միայն դատողություններ անելու ունակությունն է կորցրել (եթե, իհարկե, երբեւէ ունեցել է), այլեւ՝ իրականությունը ադեկվատ ընկալելու կարողությունը: Այսպես, Գուլուզադեն կարծում է, իսկ ինչ որ նա բարձրաձայնում է, կարելի է համարել ադրբեջանական իշխանությունների «ենթատեքստային» դիրքորոշում, թե «կան բոլոր նախանշանները, որ Հայաստանը կփոխի մոտեցումները»՝ նկատի ունենալով, իհարկե, ԼՂ բանակցային գործընթացի հեռանկարը:

Մենք, հարկավ, նրան չենք զրկում կանխատեսումներ անելու կամ երազելու իրավունքից: Բայց չէ՞ որ կանխատեսումը, եթե գնչուի բախտագուշակություն չէ, պետք է տրամաբանվի իրադարձությունների ընթացքից: Գուլուզադեն, սակայն, գերադասում է սեփական դատողությունները «հիմնավորել Հեյդար Ալիեւի իմաստնությամբ, որը դեռեւս 1990-ական թվականներին կանխատեսել է բոլոր իրադարձությունները եւ Ադրբեջանն ուղղորդել այդ ճանապարհով»: Խոսքը «դարի գործարքի»՝ արեւմտյան նավթային ընկերությունների հետ կնքած համաձայնագրերի մասին է, որով, ըստ Գուլուզադեի, «կանխորոշվել է Ադրբեջանի արեւմտամետ ճանապարհը»:

Բայց չէ՞ որ այդ գործարքը գրեթե այնքան վաղեմություն ունի, որքան ԼՂ հարցով միջազգային միջնորդությունը: Եվ նույնքան ժամանակ էլ ադրբեջանական իշխանությունները պնդել են, որ «ղարաբաղյան կարգավորման բանալին գտնվում է Մոսկվայում»: Իսկ վերջերս էլ այդ երկրի արտգործնախարարն ի լուր ամենքի ասել է, որ Ադրբեջանը «ՆԱՏՕ-ին անդամակցելու նպատակ չունի»: Ավելին, պաշտոնական Բաքուն «մշտական չեզոքություն» է հռչակել: Այս իրավիճակում ինչո՞ւ պիտի «զարգացման արեւմտյան ճանապարհը» Իլհամ Ալիեւին ԼՂ հարցում լրացուցիչ լծակ տրամադրի: Ամենակարեւորը՝ ինչպե՞ս, եթե բանակցային գործընթացի միջնորդությունը խստորեն բալանսավորված է Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ:

Տես էջ 5

# Նիկոյանը, Աբրահամյանը, Շարմազանովը…

## *Նոր ընտրված ԱԺ նախագահը վարդագույն ծաղիկներ նվիրեց իր մրցակցին*

Երեկ տեղի ունեցած փակ գաղտնի քվեարկությամբ ԱԺ նախագահ ընտրվեց ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանը: Խորհրդարան էին եկել այնպիսի պատգամավորներ, որոնց լրագրողները միշտ չէ, որ «երջանկություն» ունեն տեսնելու: Սակայն երեք խմբակցության ղեկավար ԱԺ տարածքում չէին եւ չմասնակցեցին քվեարկությանը (ՕԵԿ, ՀՅԴ եւ ԲՀԿ): ԱԺ հաշվիչ հանձնաժողովի նախագահ Գագիկ Մելիքյանի՝ ընտրությունից հետո հրապարակած թվերով՝ 106 պատգամավորից 102-ն իրենց քվեն տվել էին Ս. Նիկոյանին, 4-ը («Ժառանգության» ներկա անդամները)՝ Լարիսա Ալավերդյանին, մի խոսքով՝ Ս. Նիկոյանն ընտրվեց ԱԺ նախագահ: Ընդ որում՝ իրենց քվեարկության մեջ ազատ թողնված ՀՅԴ-ի ներկա պատգամավորները նույնպես քվեարկել էին Ս. Նիկոյանի օգտին: Վերջինս, ինչպես երեւում է, միանգամից ուզում էր բարքերում նոր սովորույթներ մտցնել, քանի որ իրեն տրված քվեների համար գործընկերներին շնորհակալություն հայտնելուց հետո իջավ ԱԺ նախագահի տեղից եւ մի հիանալի վարդագույն ծաղկեփունջ ձեռքին ուղղվեց դեպի շարքերից առաջինի վերջում գտնվող Լարիսա Ալավերդյանը եւ ծաղկեփունջը նվիրեց նրան: Վերջինս ակնհայտորեն հուզված էր: Այնուհետեւ ԱԺ նոր նախագահն իր առաջին հրամանով երեկոյան ժամը 18:30-ին արտահերթ նիստ նշանակեց՝ ԱԺ փոխնախագահի ընտրելու օրակարգով:



Տես էջ 2

# Հայկական ԱԷԿ-ի անվտանգությունը պատշաճ մակարդակում է

## *Գերմանացի պրոֆեսոր Ադոլֆ Բիրկհոֆերի պատասխանը հարեւան երկրներից հայկական ԱԷԿ-ի մասին հնչող հայտարարություններին*

Ատոմակայանների անվտանգության գծով միջազգային ճանաչում ունեցող մասնագետ, գերմանացի պրոֆեսոր Ադոլֆ Բիրկհոֆերը, երեկ, պատասխանելով «**Ազգի**» հարցին, թե ի՞նչ կարծիքի է Ադրբեջանից, Թուրքիայից եւ Վրաստանից պարբերաբար հնչող հայտարարությունների մասին հայկական ԱԷԿ-ի վտանգավորության առնչությամբ, նախ ժպտաց, ապա ասաց, որ նման հայտարարություններ արվում են նաեւ գերմանական ատոմակայանների վերաբերյալ, բայց դրանք չեն համապատասխանում իրականությանը: Ըստ գերմանացի պրոֆեսորի, հայկական ատոմակայանի անվտանգությունն այսօր պատշաճ մակարդակում է: Նա նշեց, որ տարիներ շարունակ աշխատում է ատոմակայանների անվտանգության ոլորտում, բայց Հայաստանը առաջին երկիրն է, որի նախագահը մասնակցում է ատոմակայանի անվտանգության քննարկումներին, լավ իրազեկված է այդ քննարկումների եւ ատոմակայանի իրավիճակի մասին:

Պրոֆեսոր Ադոլֆ Բիրկհոֆերը երեկ մասնակցում էր ՀՀ նախագահին կից ատոմային էներգետիկայի անվտանգության խորհրդի (ԱԷԱԽ) նիստին, որի ավարտից հետո էլ հանդիպում ունեցավ լրագրողների հետ: Նիստին ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, խորհրդի անդամ 10 գիտնականներ Ռուսաստանի Դաշնությունից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Ավստրիայից, Չեխիայից եւ Հայաստանից: Ադոլֆ Բիրկհոֆերը ԱԷԱԽ-ի նախագահն է: **Ա. Մ.**

ԱԶԳ

# Ընթացիկ

# «Քիմիան մեր կյանքն է, մեր ապագան»

## *Գիտաժողով Մանկավարժական համալսարանում*

Դեկտեմբերի 5-ին եւ 6-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ քիմիայի մագիստրոսների հանրապետական առաջին միջբուհական գիտաժողովը:

2011 թվականը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 63-րդ նստաշրջանում հռչակվել է որպես քիմիայի միջազգային տարի, որի կարգախոսն է` «Քիմիան մեր կյանքն է, մեր ապագան»:



Գիտաժողովը բացեց Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը**: Շնորհավորելով ներկաներին` նա հիշեց, որ ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ այսօր դպրոցում ամենասիրելի դասասենյակներից դեռեւս շարունակում է մնալ քիմիայինը. հետաքրքրական, բազմազան եւ հեռանկարային այդ աշխարհը: «Այսօր համագործակցելով մի քանի առաջատար համալսարանների հետ առաջին անգամ կազմակերպել ենք մագիստրոսների հանրապետական նման միջբուհական գիտաժողով: Քիմիայի զարգացումը մեզանում պայմանավորված կլինի, ինչու ոչ, նաեւ այսօրվա մեր մագիստրոսների, նրանց ներկայացրած գիտական հետազոտությունների որակով եւ մակարդակով: Քիմիան ունի մեծ ավանդույթներ, հետեւապես նաեւ մեծ ապագա», ընդգծեց Ռուբեն Միրզախանյանը:

Այնուհետեւ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ քիմիայի եւ երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար **Լեւոն Թավադյանը**` «Քիմիայի հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով զեկուցմամբ, իսկ Երեւանի պետական համալսարանի պրոռեկտոր **Ալեքսանդր Գրիգորյանը** անդրադարձավ մագիստրոսական կրթությանը Երեւանի պետական համալսարանում:

«Նման գիտաժողովը նպատակ ունի խթանել երիտասարդ մագիստրոսների հետագա գիտական գործունեությունը: Շատերի համար սա առաջին պատասխանատու քայլն է այս ոլորտում, որը հետագայում լուրջ գիտական գործունեությամբ զբաղվելու առիթ կհանդիսանա եւ կազդարարի նրանց մուտքը գիտական աշխարհ: Այս գիտաժողովն աննախադեպ էր, եւ հուսով եմ, որ կկրի շարունակական բնույթ», ասաց Մանկավարժական համալսարանի կենսաբանության, քիմիայի եւ աշխարհագրության ֆակուլտետի դեկան, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սվետլանա Հովակիմյանը**:

Գիտաժողովի ընթացքում տարբեր բուհերի 35 մագիստրոսներ ներկայացրին բազմաբնույթ զեկուցումներ: «Բոլոր ներկայացվող աշխատանքները բացառապես փորձարարական էին: Ունենք պայմանագրեր գիտահետազոտական քիմիական մի շարք ինստիտուտների հետ, որտեղ էլ մեր մագիստրոսները կատարել են իրենց աշխատանքները: Վերջիններն աչքի են ընկնում ե՛ւ նորույթով, ե՛ւ արդիականությամբ, իսկ հետագայում դրանք կարող են դառնալ թեկնածուական ատենախոսություններ», նշեց Սվետլանա Հովակիմյանը:

Զեկուցումների ավարտից հետո ծավալվեցին բուռն քննարկումներ, որոնց ընթացքում արծարծվեցին բոլոր այն խնդիրներն ու թերությունները, որոնք տեղ էին գտել ներկայացվող աշխատանքներում:

Գիտաժողովին ներկա էին քիմիայի բնագավառի հայտնի գիտնականներ, ակադեմիկոսներ, դասախոսներ եւ ուսանողներ:

Վերջում բոլոր մագիստրոսներին մասնակցության համար տրվեցին հավաստագրեր եւ քիմիայի գրքեր:

# Մանկապարտեզներն ու դպրոցները հոգեորսությունից պաշտպանված չեն

Երեւանի թիվ 161 մանկապարտեզում միջոցառման ժամանակ «Հիսուսի վերջին օրերի սրբերը» կամ, այլ կերպ ասած, «Մորմոններ» կրոնական շարժումը քարոզչական բնույթի տեսանյութ է տարածել, որն անմիջապես կանխվել է:

«**Ազգ**» օրաթերթի հետ զրույցում Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի մամուլի քարտուղար **Շուշան Սարդարյանը**, հաստատելով տեղեկատվությունը ասաց. «Միջոցառման ժամանակ նրանք փորձել են ներկայանալ հյուրերին եւ տեսանյութեր բաժանել, ինչն անմիջապես նկատվել է: Վերջիններիս բարեկիրթ ձեւով բացատրել են, որ այդ ամենը կդիտվի իբրեւ քարոզչություն, եւ նրանք տարածքից հեռացել են: Կա Տարոն Մարգարյանի հստակ հանձնարարականը` վարչական շրջանի ղեկավարներին եւ քաղաքապետարանի ենթակայության տակ գործող հանրակրթական ոլորտի պատասխանատուներին, խիստ հետեւողական լինել եւ կանխել կրոնական, աղանդավորական քարոզչության ներթափանցման դեպքերը նախադպրոցական ուսումնական հաստատություններում եւ հանրակրթական դպրոցներում»:

Մեզ հետ զրույցում Քայքայիչ պաշտամունքներից տուժածների օգնության, վերականգնողական կենտրոնի նախագահ **Ալեքսանդր Ամարյանն** ասաց, որ կատարվածը չի կարելի անվանել հոգեորսություն, որովհետեւ նրանք ոչ թե գրականություն են բաժանել, այլ հարցին, թե ովքե՞ր են եւ ի՞նչ կազմակերպություն են ներկայացնում, իրենց կառույցի մասին տեղեկատվական տեսանյութ են տրամադրել:

«Այլ բան է, որ Հայաստանում չկա օրենք, որը կտա հոգեորսության հստակ պատասխանը: Մենք պետք է կարողանանք տարբերել տեղեկատվության տրամադրումը հոգեորսությունից, սակայն այս առումով օրենքը կաղում է: Կրոնական կազմակերպությունները պետություն են պետության մեջ»:

Ամարյանն ասաց, որ հանրապետության բազմաթիվ մանկապարտեզներում կատարվում է հոգեորսություն, երբ դաստիարակները երեխաներին իրենց կրոնական կազմակերպության երգերն ու բանաստեղծություններն են սովորեցնում: Նույնը կատարվում է նաեւ հանրակրթական դպրոցներում:

«Մեր ուսումնական հաստատություններն ընդհանրապես պաշտպանված չեն, եւ բազմաթիվ են դեպքեր, երբ հենց երեխաներն են ենթարկվում հոգեորսության` առանց այդ մասին տեղյակ լինելու», ասաց Ամարյանը` հիշեցնելով, որ տարիներ առաջ արտասահմանից հաճախ դպրոցականներին կոշիկի տուփերով նվիրատվություն բաժանելիս նաեւ կրոնական քարոզչական նյութեր են տրամադրել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Նախկին քաղաքապետը` «Գազպրոմբանկի» առաջին փոխնախագահ

**Ռուսաստանի երեք խոշոր բանկերից մեկը հանդիսացող «Գազպրոմբանկ»-ի պաշտոնական կայքէջը` www.gazprombank.ru, տեղեկացնում է, որ Երեւանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանը նշանակվել է բանկի առաջին փոխնախագահ: «Գազպրոմբանկ»-ը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի 3 խոշոր բանկերի շարքում է: Ընկերությունն իր կապիտալով զբաղեցնում է 3-րդ հորիզոնականն ու համարվում ֆինանսական հսկա:**

**Կարեն Կարապետյանը Երեւանի 53-րդ քաղաքապետն էր եւ հրաժարական է տվել այս տարվա հոկտեմբերի 28-ին: Կարապետյանը նշել էր, որ մայրաքաղաքի գլխավոր կառավարչի պաշտոնից հրաժարվում է անձնական խնդիրների եւ Ռուսաստանում այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ:**

Հ. Հ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

# Նիկոյանը, Աբրահամյանը, Շարմազանովը...

## *Հ. Աբրահամյանը հրաժարական տալիս մտածել է*

*1-ին էջից*

**Քվեարկության եկած Հովիկ Աբրահամյանով լրագրողները դեռ ակտիվ հետաքրքրվում էին: «Ազգին» հետաքրքրում էր, թե ինչպե՞ս է վերաբերվում նա լրագրողների ազատ ելումուտը արգելող իր որոշումը վերանայելու Նիկոյանի խոստմանը, հարցը վերաձեւակերպեցինք` այդպիսի խոստումը նրան չի՞ նեղացնում. ոչ, Աբրահամյանն այդպիսի որոշումից չի նեղանում, յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում իր գործունեությունը: Հնչեց հարց, թե արդյոք Ազգային ժողովը ղեկավարելու ուղղությամբ Աբրահամյանը խորհուրդներ տվե՞լ է Նիկոյանին. «Պարոն Նիկոյանի հետ աշխատել ենք երեք տարի, իմ կարծիքով` նա խորհուրդների կարիք չունի եւ գիտի որից հետո ինչն է»: ԱԺ-ի դերը բարձրացնելու եզրույթը «անչափելի» անվանած Նիկոյանի մասով էլ նշեց, թե ամեն մարդ իր տեսակետով է չափում: Տեր-Պետրոսյանի հայտարարություններին` ԲՀԿ-ի վերաբերյալ, Հ. Աբրահամյանն այսպես անդրադարձավ. նախ խորհուրդ տվեց այդ մասին հարցնել ՀԱԿ-ին եւ ԲՀԿ-ին, ապա ավելացրեց. «Քաղաքական ուժերը պետք է հստակեցնեն, թե ում հետ են գնում: Ես գտնում եմ, որ կոալիցիա կա` ՀՀԿ, «Բարգավաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր», եւ այս կոալիցիան գործում է»: Նա նաեւ նշեց, թե ՀՀԿ շտաբի հետ կապված կազմակերպչական հարցեր են լուծվում այժմ, օրինակ` երեկ նա այս հարցերով հանդիպելու էր Երեւանի քաղաքապետի եւ մարզպետների հետ: Արդյոք չի՞ զղջացել ԱԺ նախագահի պաշտոնից հրաժարվելով. «Մինչեւ թողնելը մտածել եմ, նոր եմ թողել, չէ՞», հարցին հարցով պատասխանեց Աբրահամյանը::**

## *Բյուջեի վերսկսված քննարկումը*

**Երեկ վերսկսվեց առաջարկություններով հարստացած 2012 թվականի բյուջեի քննարկումը: Ըստ ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանի` խորհրդարանականների 500 առաջարկից ընդունվել են 135-ը, հիմնականում առաջարկները վերաբերել են եկամտային մասի եկամուտների ավելացմանը եւ վերաբաշխմանը: «Ժառանգության» 152 առաջարկից ընդունվել է մեկը, ՕԵԿ-ի 140 առաջարկից 130-ը, ԲՀԿ-ի առաջարկների զգալի մասը եւս ընդունվել են: Բյուջեի մասին ելույթով հանդես եկավ եւ ԱԺ նորընտիր նախագահը (ՀՀԿ տեսակետ) եւ վարչապետ Տիգրան Սարգսյանը (եզրափակիչ ելույթ): Այսօր բյուջեի նախագիծը կքվեարկվի:**

## *Արտահերթ նիստով ԱԺ փոխխոսնակ ընտրվեց Էդուարդ Շարմազանովը*

**Երեկ ժամը 18:30-ին հրավիրված ԱԺ արտահերթ նիստում ԱԺ փոխնախագահի արդեն թափուր տեղի համար էլի առաջադրվեց երկու թեկնածու: ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանն առաջադրեց Էդուարդ Շարմազանովի, իսկ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը` Արմեն Մարտիրոսյանի թեկնածությունը: Երկու թեկնածուներն էլ ելույթ ունեցան: Իր ելույթում Է. Շարմազանովն իր առաջադրումը համարեց ՀՀԿ-ում սերունդների համերաշխության նշան, ընտրվելիս խոստացավ ժողովրդավարություն պառլամենտական աշխատանքում, պառլամենտական դիվանագիտության զարգացում, որպես Հայաստանի նախագահի նախաձեռնողական քաղաքականությանը նպաստելու գործիք, եւ ԼՂՀ եւ ՀՀ Ազգային ժողովների արդյունավետ գործակցության զարգացում:**

**Արմեն Մարտիրոսյանը խոսում էր պետական համակարգում հակակշիռների ներմուծման անհրաժեշտությունից (այդ թվում` ԱԺ փոխնախագահի ընդդիմությունից լինելու հանգամանքը), ընդդիմությանը լայն լիազորություններ տալուց:**

**«Տոլեռանտ, կրթված, բարեկիրթ» եւ մի շարք այլ նման բնորոշումներ տվեց իր իր երիտասարդ գործընկերոջը ՀՀԿ-ական Մկրտիչ Մինասյանը: «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը ընդգծեց Արմեն Մարտիրոսյանի առաջադրման նպատակը, որը նույնն էր, ինչ Լարիսա Ալավերդյանի առաջադրման դեպքում`բոլորին տալ այլընտրանքի հնարավորություն, ցույց տալ «Ժառանգության» տարբերանշանը: Նա 2008 թվականի մարտի 1-ին Արմեն Մարտիրոսյանի պահվածքը խիզախություն որակելով` նշեց, թե այդ հատկանիշը շատ էական է ԱԺ նախագահի տեղակալի պաշտոնի համար, մանավանդ` ընտրությունների շրջանում: «Ժառանգության» մյուս ներկայացուցիչները եւս գովեցին Ա. Մարտիրոսյանին: ԲՀԿ-ից Վարդան Բոստանջյանը նշեց` «Շարմազանովն ընտրված է, քանի որ մենք դրանում համոզված ենք»` հավելելով, որ մարդը պետք է վաստակ ունենա, որ նրան հանձնեն խմբակցության քարտուղարի եւ մամուլի խոսնակի պաշտոնը: Բարեկրթությունը եւս նշվեց: Ի դեմս Շարմազանովի` Բոստանջյանը ստացավ նոր լիցք` արդիական-ժամանակակից, որի կրողն ու իրագործողը Շարմազանովն է:**

**ՕԵԿ-ից Հովհաննես Մարգարյանը նշեց, որ քննարկել են Շարմազանովի թեկնածությունը խմբակցությունում` ՕԵԿ-ն իր ձայները տալու է Շարմազանովին:**

**«Ժառանգություն» խմբակցության տեսակետը լսելիս ՀՀԿ-ականների մի մասի համբերությունը սպառվեց եւ նրանք փորձում էին խանգարել Ս. Սաֆարյանին:**

**ԱԺ փոխնախագահի փակ գաղտնի քվեարկությունը տեղի ունեցավ երեկ ժամը 20-ից մինչեւ 20:40, որից անմիջապես հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Գագիկ Մելիքյանը ԱԺ-ին հայտնեց, որ քվեարկությանը մասնակցած 98 պատգամավորից 92-ը իրենց ձայնը տվել են Է. Շարմազանովին, իսկ 6-ը` Արմեն Մարտիրոսյանին: Այդպիսով, ԱԺ փոխնախագահ է ընտրվել Է. Շարմազանովը:**

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 375010 Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ընդդիմությունը չի հավատում արդար ընտրություններին, բայց մասնակցելու է դրանց

ՀՀԿ պատգամավոր Արտակ Զաքարյանի հավաստիացմամբ՝ ազատ ու արդար ընտրություններ անցկացնելու մասին խոսակցությունները մոդա կամ նորամուծություն չեն: Դրանք առօրյա քննարկման խնդիր են հասարակության համար: Պատգամավորը շեշտում է, որ 20 տարվա ընթացքում ընտրությունների կազմակերպման հարցում ունեցել ենք դառը փորձություն, քաղաքական դաստիարակություն, ձեւավորվող քաղաքական կուսակցություններ, անհաջողություններին զուգահեռ ձեռքբերումներ, որոնք պետք է նպաստեն նոր որակի ընտրությունների կազմակերպմանը:

Թե ե՞րբ է գալու պահը, որ տեսականից անցնենք գործնական փուլի եւ գրվածը դարձնենք իրականություն՝ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ներկայացուցիչ **Արմեն Առաքելյանը** նշում է՝ լուրջ մեթոդներ են անհրաժեշտ:

Քաղաքական գործիչը շեշտում է, որ մեկնարկել է քաղաքական գովազդը, քողարկված ընտրակաշառք է բաժանվում: «ՀՀԿ-ն լայնամասշտաբ բարեգործություն է կատարում: Նույնը կատարում է «Բարգավաճը»: Ջրի բժշկություն են անում: Ես արդեն էդ հիվանդ մարդկանց դեմքերն անգիր գիտեմ, էնքան են նրանց հեռուստատեսությամբ ցույց տվել»: Առաքելյանի մեկնաբանությամբ՝ ՌԴ Դումայի ընտրությունները ապացուցեցին՝ Հայաստանում դժվար լինեն «նորմալ ընտրություններ»:

«Ժառանգություն» խմբակցության պատգամավոր **Արմեն Մարտիրոսյանը** քաղաքական կամքը համեմատում է թռչունի հետ, որն արդեն քսան տարի երկնքում է, եւ ոչ ոք չի կարողանում նրան բռնել: Նրա գնահատմամբ՝ մեկնարկել է ընտրակաշառքների փուլը: «Ընտրությունները նշանակված են մայիսին, երբ սկսվում է արտագնա աշխատանքի սեզոնն, ու շատ տղամարդիկ մեկնում են Հայաստանից: Հետեւաբար իշխանությունները իրենց տրամադրության տակ կունենան մի քանի հարյուր հազար ձայն»:

Ըստ ՀԱԿ-ի ներկայացուցիչ **Ֆելիքս Խաչատրյանի**՝ կա ընդամենը մի մարդ, ում ցանկությամբ Հայաստանում կլինեն կամ չեն լինի արդար ընտրությունները: «Այդ մարդը Սերժ Սարգսյանն է», ասում է ՀԱԿ-ի ներկայացուցիչն ու հավելում, թե իրենք չեն ակնկալում, որ մայիսյան ընտրությունները կլինեն արդար եւ թափանցիկ: Նրա մեկնաբանությամբ՝ ԿԸՀ-ի վարչարարական ռեսուրսներն ու կոռուպցիոն հնարավորությունները «վենետիկցիներն» ավելի են հստակեցրել, լրացուցիչ սողանքներ են ստեղծվել ընտրակեղծիքի համար: «Հանրապետության երկրորդ դեմքը նշանակվում է ՀՀԿ շտաբի մեջ, որտեղ կազմակերպի ընտրությունները: Մինչդեռ Աբրահամյանի դեմքը նախկինում կազմակերպված ընտրություններից հետո չի փայլում»:

Քաղաքական դաշտում կամքի, դաշտի առողջացման անհրաժեշտությունն է ընդգծում ՀՅԴ խմբակցության պատգամավոր **Արծվիկ Մինասյանը**՝ հավելելով, որ առողջացումը պետք է տեղի ունենա գաղափարական հենքի վրա: «Այդ ժամանակ երկրում կլինի ոչ թե 70, այլ 5-6 կուսակցություն:



Մինասյանն արտախորհրդարանական ուժերին առաջարկում է համախմբվել ընտրական գործընթացների կազմակերպման հարցում եւ իշխանությանը պարտադրել հասարակության թելադրած խաղի կանոնները:

Ըստ **Արտակ Զաքարյանի**՝ ընդդիմությունը չունի քաղաքական կամք եւ հավատ, որ ընտրությունները թափանցիկ են անցկացվելու: Նա այս գործելակերպը նմանեցնում է հերետիկոսության: «Մենք հերետիկոս ենք, բայց մենք ճիշտ ենք, ու թող ողջակիզվեմ որպես հերետիկոս», ի պատասխան ասաց Արմեն Մարտիրոսյանը:

«Նախագահը պետք է կանչի իր նազիր-վեզիրներին եւ ասի, որ կարեւորը հանրապետությունն է, այլ ոչ թե բարիգալուստահակյանները», շարունակում է Ֆ. Խաչատրյանը: Ընդդիմադիր ուժերը չեն բացառում, որ այս ընտրություններն էլ են կեղծվելու, այնուամենայնիվ, նրանք մասնակցելու են ընտրություններին: ՀԱԿ-ի ներկայացուցչի գնահատմամբ՝ ձեռքերը ծալած նստելը սխալ է: Մարտիրոսյանն էլ հիշեցրեց, որ մարտի 1-ին ժողովրդի հետ էր 6 պատգամավոր: «Լավ չէ՞ր լինի, որ այնտեղ լիներ 131 պատգամավոր», հարցրեց Մարտիրոսյանը՝ հավելելով, որ 6 պատգամավորի ներկայությունը Մյասնիկյանի պողոտայում իզուր չէր:

«Դուք որ դանակահարվել եք, լրիվ իզուր էր», հակադարձեց Դաշնակցության ներկայացուցիչը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼՈՆԴՈՆ**

# Վարդան Ուզունյանին շնորհվեց «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան եւ հայրապետական կոնդակ

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի կարգադրությամբ հայրապետական կոնդակով եւ «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով բազմամյա ազգանվեր գործունեության համար պարգեւատրվել է Լոնդոնի Թեքեյան Թրաստի պատվավոր քարտուղար, Երեւանի «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի նախագահ Վարդան Ուզունյանը:



Պարգեւատրման արարողությունը տեղի է ունեցել նոյեմբերի 27-ին Լոնդոնի Սբ Եղիշե եկեղեցում: Տեր հայր Ներսես Ներսեսյանը հավուր պատշաճի պատարագ մատուցելով՝ խոսել է նաեւ տարիների ընթացքում Վարդան Ուզունյանի հետ համագործակցության մասին, որի նպատակն է հայ համայնքի մշակութային կյանքի զարգացումը: Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը բարձր գնահատելով նվիրյալ հայորդու վաստակը ազգային եւ եկեղեցական կյանքում, հղել է իր սրտաբուխ բարեմաղթանքներն ու օրհնությունը եւ Վարդան Ուզունյանի կրծքին է ամրացրել «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանը:

Լոնդոնի «Թոթորն Թարա» հյուրանոցում տոնական հանդիսությանը ներկա են եղել տարբեր կազմակերպությունների ղեկավարներ, բարերարներ, թեքեյանցի աջակիցներ, մշակույթի գործիչներ: Վարդան Ուզունյանին շնորհավորելու էին եկել Մեծ Բրիտանիայի դեսպան Չարլզ Լոնդսդեյլը, Հայաստանում ՄԲ նորանշանակ դեսպան Ջոնաթան Էյվզը, ինչպես նաեւ ՄԹ-ի հայ համայնքի այլ ներկայացուցիչներ, օտարերկրյա հյուրեր, նաեւ Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպան Կարինե Ղազինյանը: Դեսպանը շնորհավորելով Վարդան Ուզունյանին, ընդգծել ու բարձր է գնահատել բարերարի բեղուն գործունեությունն ու նվիրումը հարազատ ժողովրդին եւ Մայր եկեղեցուն:

Վարդան Ուզունյանը երախտիքի խոսք է ուղղել նախ Ամենայն հայոց կաթողիկոսին, ապա Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանին՝ այդ բարձր պարգեւին իր թեկնածությունը առաջադրելու համար: Նա նաեւ շնորհակալություն է հայտնել բոլոր այն անձանց, ովքեր տարիների ընթացքում աջակցել են իրեն՝ իրականացնելու տարբեր ազգանվեր ծրագրեր:

Հանդիսությունն ավարտվել է տիկին Ռոզեթ Ուզունյանի ելույթով, որն ասմունքել է Վահան Թեքեյանի «Հաշվեհարդար» ստեղծագործությունը:

«Ազգ»-ը շնորհավորում է պրն Վ. Ուզումյանին այս առթիվ:

# Մարզերում իրականացվող ծրագրերը կբերե՞ն որակական փոփոխությունների

*1-ին էջից*

Անհատական շինարարության խթանման նպատակով կառավարությունը պարզեցրեց շինթույլտվություն ստանալու կարգը, նվազեցնելով տան կառուցման համար պահանջվող ժամկետները եւ նախագծային փաստաթղթերի պատրաստման ծախսերը: Նախկինում այդ գործընթացը տեւում էր 1-3 ամիս եւ 400-800 հազար դրամ՝ նախագծային աշխատանքների պատրաստման համար: Այժմ արդեն բնակիչները կարող են անվճար ընտրել պետության կողմից առաջարկվող 17 բնակելի տների նախագծերից որեւէ մեկը եւ մի քանի օրվա ընթացքում ստանալ շինարարության թույլտվությունը:

Անցած երկու տարվա ընթացքում զգալի միջոցներ են հատկացվել մարզերում դպրոցների հիմնանորոգմանը: 2008-2010-ին դպրոցաշինությանը հատկացված շուրջ 40 մլրդ դրամից 30 մլրդ դրամն ուղղվել է մարզերին: 2011-ին նույն նպատակով հատկացված 8,7 մլրդ դրամից 6,9 մլրդ դրամն է ուղղվել մարզերի դպրոցներին: Նորոգվել եւ վերակառուցվել է 864 դպրոցներ եւ այլ կրթական հաստատություններ:

Մարզերում այդ նույն ժամանակահատվածում զգալի աշխատանքներ են կատարվել բնակիչների համար կենսական նշանակություն ունեցող մյուս ոլորտում՝ առողջապահությունում: Մասնավորապես, վերակառուցվել եւ ժամանակակից սարքավորումներով են հագեցել Իջեւանի, Հրազդանի, Արմավիրի, Արարատի, Գորիսի, Ապարանի, Գավառի բժշկական կենտրոնները: Գյուղական համայնքներում կառուցվել են 10 նոր եւ նորոգվել 20 բժշկական ամբուլատորիաներ:

2010-ից իրականացվող «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրում կառավարությունը փոփոխություններ կատարեց, որոնցով բարելավվեց մարզերում երիտասարդ ընտանիքների համար բնակարաններ գնելու պայմանները: Հիփոթեքային վարկի 2 տոկոս սուբսիդավորման փոխարեն, պետությունը մարզերում սկսեց սուբսիդավորել վարկերի 4 տոկոսը, այսպիսով վարկի տոկոսը մարզերի երիտասարդ ընտանիքների համար նվազեցնելով մինչեւ 6,5-7 տոկոսի: Միաժամանակ, մարզերում այս ծրագրից օգտվողների համար նվազեցվեց կանխավճարի չափը՝ 30 տոկոսից մինչեւ 10 տոկոսի: Այս փոփոխությունների արդյունքները զգացնել տվեցին հաջորդող ամիսների ընթացքում: Եթե 1 տարվա ընթացքում մարզերում այս ծրագրից օգտվել էին 84 ընտանիք, ապա վարկավորման պայմանների բարելավումից հետո այդ թիվը կտրուկ ավելացավ, 6 ամսվա ընթացքում հասնելով 144-ի:

Մարզերի համաչափ զարգացմանն ուղղված այլ ծրագրերից արժե հիշատակել առավել աղքատ 225 համայնքներին լրացուցիչ արտոնությունների տրամադրումը՝ առավել ցածր տոկոսներով վարկեր, պարարտանյութ եւ սերմացու ստանալու առավելություններ եւ այլն: Հաջորդը գյուղերի զարգացման համար պետության կողմից 20 մլրդ դրամի հատկացումն է՝ վերացնելու համար բնականոն գործունեության խոչընդոտները: Ընդ որում, թե տվյալ գյուղում ո՞ր խնդրի լուծումն է առավել կարեւոր, որոշվում է տեղում, ապա առաջարկություն արվում կառավարությանը:

Աղքատության խթանմանն ուղղված մարզերում իրականացվող պետության աջակցությամբ, միջազգային եւ մասնավոր ֆինանսավորմամբ ծրագրերի մասին շատ է խոսվել, մեկ անգամ անդրադառնալու կարիք թերեւս չկա: Մնում է միայն հուսալ, որ մարզերում իրականացվող ծրագրերը, ի վերջո, որակական փոփոխությունների կբերեն եւ կթեթեւացնեն մեր հայրենակիցների ներկայիս հոգսաշատ առօրյան:

# Զինծառայողի մահվան կապակցությամբ հարուցվել է քրեական գործ

**Հայկական բանակի Լոռիում գտնվող զորամասերից մեկում ժամկետային զինծառայող, այս տարվա հունիսին բանակ զորակոչված գյումրեցի Նարեկ Դավթյանի դիակը գտել էին դեկտեմբերի 3-ին: ՊՆ քննչական ծառայության փոխանցմամբ՝ Դավթյանի դիակը՝ ծնոտի տակից մահացու հրազենային վիրավորումով, հայտնաբերվել է պահակակետի հերթափոխի ժամանակ: Դավթյանի մահվան կապակցությամբ ՊՆ քննչական ծառայության 7-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով: Նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն: Արդյունքները դեռ պատրաստ չեն:**

**Հիշեցնենք, որ քրեական օրենսգրքի համաձայն՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով:**

Հ. Հ.

# Երկրաշարժի հետեւանքները 23 տարի անց

## *Ինքնահարցազրույց-մենախոսություն*

***Մասնագիտությամբ ֆիզիոթերապեւտ-մանուալիստ է Գագիկ Կարապետյանը: Ծնունդով գյումրեցի, կրթությունը Երեւանում ստացած, ապա Մոսկվայում շարունակած, աշխատել է Ռուսաստանում, Ֆրանսիայում, Մեքսիկայում, Մ. Նահանգներում, Դուբայում, այժմ աշխատում եւ բնակվում է Երեւանում: Բազմաթիվ հոդվածների հեղինակ եւ ռադիոհեռուստահաղորդումների մասնակից է: 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված նրա «Դժոխք» պոեմը ժող. արտիստ Վլադիմիր Աբաջյանի կատարմամբ մտավ Ազգային ռադիոյի «Ոսկե ֆոնդ»: Մարդկային ճակատագրի ցնցող պատկեր է հեղինակի մեկ այլ՝ «Գուգոն» պատմվածքը, նույնպես 1988-ի դեկտեմբերյան ահասարսուռ դեպքերի արձագանք, նմանապես «Հանդիպում» եւ այլ գործեր:***

***«Սեր եւ խռովք» ժողովածուն հեղինակի փխրուն, զգայուն ներաշխարհի բանաստեղծական արտահայտությունն է՝ քնարական, նուրբ, երազող: Հիվանդները իր մասին գրում են անսահման երախտիքով ու գորովանքով, այդ թվում նշանավոր մտավորականներ Հայաստանից եւ Սփյուռքից: «Բուժիչ բանաստեղծը», այսպես նրան անվանում է Արամայիս Սահակյանը:***

***«Հրաշագործ ձեռքերից որտեղից այդքան ուժ, ամրություն, էներգիա եւ միտք. ինձ թվում է, թե քո ձեռքերը մտածում են, խոսում, զգում եւ բուժում», գրում է Ռուբեն Տերտերյանը:***

***«Բժիշկ-արվեստագետ Գագիկ Կարապետյանն իրոք բացառիկ երեւույթ է մեր հասարակության մեջ: Նա զարդարում է մեր կյանքը իր գոյությամբ, իր գիտելիքներով եւ իր շնորհքներով: Նա իր նվիրվածությամբ մեր ժողովրդի ցավն է ամոքում ու բուժում եւ որպես հատուցում ստանում նրա օրհնությունը՝ ի կատարումն իր իղձերի» (Վերժինե Սվազլյան):***

***Ներկայացվող մենախոսություն-ինքնազրույցը հեղինակի մտորումներն են իր ծննդավայր Գյումրիի, հայ հասարակության ներկա բարքերի, իրողությունների եւ ապագայի մտահոգությամբ:***

Քրտինքի մեջ կորած վեր թռա քնից, ծանոթ վախ անցավ մարմնովս. որերորդ անգամ երազիս մեջ նույն մարդը մահացավ գրկիս մեջ: Բայց ինչո՞ւ 23 տարի շարունակ ես նույն երազն եմ տեսնում, եւ միշտ նոյեմբերի վերջին՝ դեկտեմբերի 7-ը գալու մոտ, ի՞նչ է՝ դա պատվերո՞վ է. չէ՞ որ ձեռքերիս մեջ շատերը մահացան այդ օրերին...

Ինչո՞ւ այդ նույն անանուն դեմքը դաջվել է ուղեղիս ծալքերում եւ ոչ մի կերպ դուրս չի «քշվում», նույնիսկ 23 տարի անց, ինչո՞ւ է վախը պատում ինձ, չէ՞ որ երկրաշարժի ժամանակ ամենաանսասան փրկարարներից էի եւ կայացնում էի՝ հիմա արդեն ինձ համար սարսափելի դարձած որոշումներ՝ փրկելու այս կամ այն օգնություն հայցող անծանոթ մարդուն:

Կեսգիշերին վեր կացա, մի կում սառը ջուր խմեցի, հիշելով տատիս խոսքերը. «Մե պուտըմ պաղ ջուր տվեք էրեխին, վախեցած է»: Տասը նման մղձավանջային հոգեվիճակների փորձ ուներ, պատմում էր գլխին եկածը եւ պատմելիս ասում էր. «Չիդեմ, ժաժքից առաջ էր, թե հետո», ու մենք ծիծաղում էինք, որ դեպքերը եւ մեր անունները մեկ-մեկ խառնում էր իրար.

*Ու հիմա էլ մենք, երբ մեծացել ենք,*
*Նստում, ելնում ենք եւ թե ծիծաղում,*
*Մեր երեխեքին մի բան պատմելիս*
*Լուռ մտորում ենք.*
*- Ժաժքից առա՞ջ էր, թե՞ ժաժքից հետո...*

Վանի երկրաշարժը, ինչպես սառը ցնցուղ, թարմացրեց մեր հիշողությունները եւ մտքով տարավ 1988-ի դեկտեմբերի 7-ի մահասարսուռ օրերը: Տեսարանները՝ մարդկանց երկյուղած աչքերը, հոգեկան ապրումները, ողբն ու լացը նույնն են, աշխարհի բոլոր մարդիկ նույն ձեւով են դրսեւորում իրենց, բայց յուրաքանչյուրը յուրովի է տանում արհավիրքի հետեւանքները: Այդ օրերին Ֆեյսբուքով ստանում էի շատ հարց-նամակներ, մեր ժողովուրդը նույնպես անհանգիստ էր, վախեցած՝ 7.3 բալից մեր տարածքին բաժին էր ընկել 3-5 բալ ցնցումներ: Թերթերից մեկի խմբագիրը հարցնում էր՝ պրն Կարապետյան, երկրաշարժը ինչպե՞ս է անդրադառնում մարդու առողջության վրա: - Այո, անդրադառնում է: Դրանից հետո երկար ժամանակ երկիրը կորցնում է ծանրության ուժը, որի շնորհիվ մարդու օրգանիզմը հազիվ վերականգնվում է, ցնցման ժամանակ խախտվում է մարդու վեստիբուլյար ապարատը՝ առաջացնելով սրտխառնոց, գլխապտույտ, կոորդինացիայի կորուստ, հետո մարմինը պատվում է վախի քրտինքով, ապա սկսվում է դեպրեսիա: Մարդը հանկարծակիի է գալիս՝ չգիտակցելով նույնիսկ ի՞նչ է կատարվում երկրի ընդերքում: Երեւույթը ես նկարագրել եմ իմ «Դժոխք» պոեմում, եւ այդ հատվածը Փարիզի գրական միջազգային կոնֆերանսում ճանաչվեց որպես լավագույն նկարագրություն եւ թարգմանվեց 5 լեզուներով.

*Հանկարծակի եւ աննկատ*
*Իջա՜ն, իջա՜ն սեւ մութ ամպեր,*
*Ձինջ քաղաքի ճակտին դիզվան,*
*Ու սեւ քամին դիպավ ամպին,*
*Սեւ թեւերով ամպը բերեց ու տարածեց*
*մի սրտխառնոց...*
*Ու գետինը ճռռաց լացով ու հեկեկաց.*
*Ուժգին ձայնով ոռնաց ահեղ վախը սարսուռ...*
*Փլթփլթոցով եփվեց կարծես սեւ մանանան...*
*Հողը ելավ ալիք-ալիք,*
*Ձիլ աղմուկով շարժվեց առաջ...*
*ու ես եկավ,*
*Սրբեց-տարավ ու ավերեց*
*բյուր երազներ,*
*Քաղաքի բիբը ահից լայնացավ,*
*Ճաք տվեց սիրտը...*

Ասեմ ավելին, մարդու առողջությունը երկրաշարժից հետո ավելի է «բզկտվում», երբ արդեն իր մեջ կրում է արհավիրքի հոգեկան եւ նյութական արժեքների կորուստը: Գիտական կոնֆերանսներից մեկի ժամանակ Գյումրիի ծննդատան գլխավոր բժիշկ Ֆելիքս Գրիգորյանն իր ելույթի մեջ նշեց, որ գիտական վերլուծությունները երկրաշարժից 10 տարի անց, ցույց են տվել, որ երեխաների մեծ մասը թերզարգացած է ծնվում: Ահա՝ բնական մեծ աղետներից առաջացած հիվանդությունների հետեւանքները: Այսօր, առողջական ծանր հետեւանքներ են արձանագրվել նաեւ Ճապոնիայում տեղի ունեցած ահավոր երկրաշարժից հետո: Գիտնականների ուսումնասիրություններով բոլոր երկրաշարժերից Սպիտակինը առաջինն էր տարաբնույթ ցնցումների քանակով, եւ նորից պարծենում ենք, որ առաջինն ենք թեկուզ աղետների ուղղությամբ, ինչպես 1915 թ. Եղեռնի շուրջն անընդհատ վիճաբանում են, մեկն ասում է՝ 1,5 մլն հայ են մորթել, մյուսը, թե չէ՝ 2 մլն, մեկ ուրիշը՝ թե 3 մլն եւ այսպես, ինչքան շատ, այնքան լավ... Ամոթահար են անում մի ամբողջ ազգի, որովհետեւ... մորթվելը վատ, շատ վատ բան է:

Բա կարելի՞ է սերունդներ դաստիարակել մորթվողի հոգեբանությամբ, վախով, ատելության ու քենի զգացումով, որոնք, ըստ էներգետիկ բեռնվածության կանոնների, երկար մնում են մարդու ենթագիտակցության մեջ՝ առաջացնելով այս կամ այն տեսակի հիվանդություններ՝ հիմնականում նյարդային դասի, որոնք էլ դարձնում են մարդուն ոչ լիարժեք, թերի:

Ֆեյսբուքի էջերից Վանի երկրաշարժի օրը շատ-շատերը ուրախության կոչեր էին անում, հրճվում՝ չիմանալով նույնիսկ, որ զոհվածների 90 տոկոսը քրդեր են եւ մի գուցե հայեր նույնպես կան: Բա մենք ինչո՞վ ենք տարբերվում նրանցից, չէ՞ որ նույնը անում էին նրանք, բա մենք էլ նրանց պե՞ս... շատ բաներ չեմ կարող գրել, շատերը հասու չեն, վախենում եմ. ախր մենք շատ հին, քաղաքակիրթ, առաջադեմ... Բայց նույնիսկ 23 տարի անց մի քաղաք-աղետի գոտի չկարողացանք անաղետ գոտի դարձնել: Պետք է, իհարկե, խոստովանել, որ Գյումրու գլխավոր փողոցները մի քիչ գեղեցկացել են, եւ սրա՛նք են ցույց տալիս զբոսաշրջիկ-ղեկավարությանը: Բա՜ աչքից հեռու, ծածուկ տեղերը: Ոչ մի ղեկավար չի ասում՝ եկեք շենքի հետեւն անցնենք, տեսնենք ի՞նչ կա: Բայց եթե անցնեն եւ մտնեն այդ անանցանելի փողոց-խրամատները, ապա դժվար թե կարողանան հետ դառնալու ճանապարհը գտնել. այդպիսի վայրեր չեն լինի նույնիսկ ամենահետամնաց երկրում: Բա՜, մենք շինարար ազգ ենք: Բայց մեզ հակառակ այդ «անիրավ» ճապոնացիները բացահայտեցին, որ աշխարհում ոչ մի շինարար չէր կարող իր ազգի համար այդպիսի անորակ տներ կառուցել, օջախից դուրս եկած մարդը երբեք չէր սարքի այդպիսի օջախ, որ փլվեր իր հարազատներին գլխին: Բա շինարար ազգը այսպիսի քաղաքներ, գյուղեր, ճանապարհներ կկառուցի՞, վերջիններն ամեն տարի նորոգվում են՝ պահպանելով փողոցի նույն փոսերը նույն տեղերում: Ուշադիր նայեք բակերին, որտեղ պատահի՝ կառուցված շինություններին, մտեք քանդված շենքերի մուտքերը, նայեք անծառ եւ անծաղիկ փողոցներին, ամեն ինչ կեղտի, փոշու ու աղբի մեջ շաղախված:

«Ամոթ չունեն» նաեւ գերմանացիները, ո՞նց էին նստել ու հաշվել Հայաստանին տրված օգնության չափը. «Շպիգել» ամսագիրը գրեց, որ եթե Հայաստանին տրված ամբողջ օգնությունը հավասար բաժանեին հայ ընտանիքների միջեւ, ապա յուրաքանչյուր ընտանիք կունենար մոտ 140-160 հազար սովետական ռուբլի: Նկատեցիք՝ չի ասում բաժանեին աղետյալ ընտանիքներին, այլ՝ յուրաքանչյուր հայ ընտանիքի, որոնք կունենային 3-4 հարկանի տուն, 4-5 մեքենայով:

Գյումրեցիները միշտ էլ համարվել են աշխատասեր, հարուստ մարդիկ եւ դա այդպես էր. աղետից հետո քաղաքը թալանվեց, մենք էլ, մեր քթի տակ, չգտանք մեր ունեցվածքն ու դրամը, որով կարող էինք աղետից հետո ավելի արագ ոտքի կանգնել, իսկ նյութական հատուցումը՝ փողն արժեզրկվեց՝ վերածվելով գրոշների: Հետո փոշիացան եւ արժեզրկվեցին մարդկային, հոգեւոր արժեքները, երկրաշարժից հետո մեծ երկրներն առաջարկեցին օգնություն, որը եւ վերջնականապես սպանեց ժողովրդի աշխատասիրությունը, քայքայեց տնտեսությունը վերջնականապես, քանի որ այդ օգնության գումարներով իրավունք չկար կառուցելու գործարաններ, եւ գործազրկությունը գնալով ավելացավ: Երկրում սկսվեց թալանը, խորհրդային տարիներին ստեղծված նյութական արժեքները վաճառվեցին հարեւան երկրներին եւ գլխավոր դերակատարը երկրի ղեկավարությունն էր՝ կրիմինալի հետ համագործակցած: Թուրքերին վաճառվեց ռազմավարական նշանակության արժեքներ, ինչպես ոսկին, գունավոր մետաղները, պղինձը: Ի դեպ, վերջինով փամփուշտներ են պատրաստում: Թուրքերը ավարի հոտն առնելով, հանգիստ բացել էին սահմանները, աշխատում էր Գյումրի-Կարս երկաթուղին: Ժողովրդի վիճակը ծայրահեղ դարձավ, իշխանավորներին կարծես սկսեց դուր գալ ժողովրդի հայհոյանքը ու անեծքը իրենց հասցեին:

Պաշտոնյան կրիմինալի հետ ժողովրդի արյամբ շաղախված միլիարդներ էր դիզում, իսկ աղետի գոտին դատարկվում էր. տղամարդիկ հեռացան՝ աշխատանք գտնելու օտարության մեջ, կանայք, երեխաներն ու ծերերը մնացին մութ ու խոնավ «դոմիկներում», որոնցից շատերը մինչեւ այսօր դեռ կան: Ժյուլ Վեռն ասում էր. «Այն երկրի տերերը, որոնք չեն կարող պահել իրենց երկրի ծերերին, հավերժ դատապարտված են անեծքի»: Ալեքսանդր Մանթաշյանցին մեռնելուց առաջ խնդրեց, որ իրեն թաղեն բլրի գագաթին՝ ձեռքերը բաց, ի տես ամենքի, թե՝ աշխարհի տիրակալը իր հետ ոչինչ չի տանում այս աշխարհից: Չտարավ այս աշխարհից ոչինչ նաեւ Սադդամ Հուսեյնը, Քադդաֆին, իրենց իսկ փողերով գնեցին զենք եւ լցրին սեփական ժողովրդի գլխին:

Ասում են՝ խելացիները սովորում են ուրիշի սխալների վրա, բայց հայը ուրիշ է, ինքը պետք է անընդհատ սայթաքի ու հետո էլ դասեր չքաղի, ու այդպես շարունակ:

Մեր երկիրը փոքր է՝ 1,5 մլն հայ է մնացել տարածքում: Կոռուպցիան կանխելու համար մեր երկրում մեծ փողեր են ներդնում: Իզուր: Որեւէ մանկապարտեզում նույնիսկ կարող են իմանալ, թե ովքեր են կոռուպցիայով զբաղվողները: Մարդիկ են, խոսում են, տարածում, թե ինչքան նյութական արժեքներ են երկրից հանվում Շվեյցարիա եւ այլուր: Եթե մենք դա չգիտենք, կամ կիսատ-պռատ գիտենք, ապա ամենազորեղ երկրի հետախուզությունը գիտի, հանգիստ եղեք:

Վերադառնալով երկրի ամենանաչքավոր՝ Շիրակի մարզին, ասեմ, որ տուն չունենալը վատ բան է, չունեցողի հոգեբանությունն էլ է այլ՝ «որտեղ կտրի կապը...» ասելով, ռիսկի են գնում, վերցնում ընտանիքը եւ հեռանում են երկրից: Հայի բողոքն է այդպիսին՝ առանց պայքարի, լուռ ու վիրավորական հեռանալ հայրենիքից: Նրանց հետեւում են հազարավորները, հեռանում են քարավաններով: Ի դեպ, հիվանդներիցս մեկը Գլենդեյլում ասաց՝ «Ապրի Լեւոն Տեր-Պետրոսյանի արեւը, որ չփախչեինք Հայաստանից, հո էսքան հարուստ չէինք լինի»: Իմ ընկերներից շատերը հեռացան երկրից, չկարողացանք պահել, բայց արի ու տես տարիներ անց արդարեցրին իրենց պահվածքը. բոլորը հարստացել են, ապրում են բարեկեցիկ կյանքով, դեռ մի բան էլ բարեգործություն են անում: Պարադոքս է, մարդը իր սեփական երկրում չի կարող հարստանալ, թույլ չեն տալիս, բայց թույլ են տալիս ուրիշ երկրները, ուրիշ ազգերը, որովհետեւ իրենք տաղանդավոր, աշխատասեր մարդկանց կարիքն ունեն, իրենց երկիրը ծաղկեցնողներ են պետք, ու անում են, ամբողջ երկրով չինովնիկ, վերահսկող եւ ոստիկան չեն աշխատում: Սովետից հետո միայն այդ հսկա, ուռճացված ապարատները չփոխվեցին, դեռ բազմանում են ու կբազմանան ու կխանգարեն, մինչեւ գործի գլուխ չեն գա իրենց երկիրը սիրող, անկաշառ մարդիկ:

Ես եւ իմ նմանները չենք գնա մեր երկրից, մենք սիրում ենք մեր երկիրը, մեր հողի եւ ջրի կոդը մեր արյան մեջ է, ուր էլ գնանք, մենք էմիգրանտներ ենք: Հայրենասիրությունը լայն հասկացություն է, այն չի սահմանափակվում մի քանի անկուշտ նախագահներով ու պաշտոնյաներով, որոնք անցողիկ են եւ մոռացվող, իսկ երկիրը՝ հավերժ: Իմ «Դժոխք» պոեմն էլ ավարտվում է այդպես.

*Եվ լույս պիտի, պիտի լինի,*
*Լույսն Աստծո ամեն մի տան*
*Հավերժական,*
*Գյումրին նորից պիտի խոսի,*
*Հավերժաբար, հավերժի հետ*
*Հավերժական...*

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆ

# Իլհամ Ալիեւը գալիք տարի անակնկալ է մատուցելու

«Իշխանության կողատահներից ստացված» տեղեկությունների համաձայն, որ դարձել են «Ենի Մուսավաթի» սեփականություն, Իլհամ Ալիեւը «Ադրբեջան-2020. հայացք ապագային» հայեցակարգ մշակելու մասին կարգադրություն ստորագրելով՝ փորձում է «լուծել ամենից առաջ իշխանության հարցը»: Թերթի աղբյուրները փոխանցում են, որ բացի տնտեսականից, «հայեցակարգն ունի քաղաքական բարեփոխումների ուղղվածություն»: Եվ եթե դրանք իրոք ձեւակերպվեն, ապա Ադրբեջանին սպասում է եւս մեկ «սահմանադրական հանրաքվե»:

Մտասեւեռվելով 2020 թվականը որպես հեռանկար տեսնելու՝ Իլհամ Ալիեւի նախաձեռնության ենթատեքստը պարզելուն, «Ենի Մուսավաթի» մեկնաբանը, հիմք ընդունելով նաեւ «վստահելի աղբյուրների փոխանցած տեղեկատվությունը», գրեթե վստահաբար պնդում է, որ իշխանության «ուղեղային կենտրոնը մտածել է ինչ գնով էլ լինի երրորդ ժամկետով Իլհամ Ալիեւի նախագահությունը դեմոկրատական շղարշ տալ, եւ արդեն իսկ քննարկվում է նախագահի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու տարբերակը»:

Ըստ այդմ, «սահմանադրական հանրաքվեի» կդրվի ներկայիս 5 տարին 7-ով փոխարինելու «հայեցակարգային առաջարկությունը»: Իսկ դա կնշանակի, որ իշխանությունն «օրինական հիմք է ստեղծում», որպեսզի միջազգային հանրությունը խիստ չվերաբերվի Իլհամ Ալիեւի՝ վերստին նախագահ դառնալու մտադրությանը:

Հաշվարկը բավական պարզ է. եթե «սահմանադրական հանրաքվեով» նման փոփոխություն կատարվի, ապա ֆորմալ առումով Իլհամ Ալիեւի առաջադրումը կբացատրվի «սահմանադրական փոփոխություններով»: Այսինքն, «հիմք կլինի» միջազգային հանրությանը բացատրելու, որ նա ոչ թե երրորդ ժամկետով է ընտրվում, այլ՝ նոր սահմանադրական ժամկետով՝ «առաջին անգամ»: Իսկ եթե հարցը հասարակացնենք, ապա կստացվի, որ երկու անգամ հինգ տարի ժամկետով պաշտոնավարած Իլհամ Ալիեւը «սահմանադրական փոփոխություններով» կդիտվի յոթ տարի ժամկետով առաջին անգամ առաջադրվող նախագահի թեկնածու, եւ ամեն ինչ դրանով էլ կսպառվի:

Այդուհանդերձ, «Ենի Մուսավաթի» աղբյուրները ասում են, որ «հայեցակարգն ունի նաեւ պահեստային գաղափար». եթե միջազգային հանրության հետ բանակցություններում դժվարություններ ծագեն, ապա իշխանությունը գործի կդնի «խորհրդարանական ընտրությունները նաեւ համամասնական ընտրակարգով անցկացնելու եւ կեսնախագահական, կեսխորհրդարանական կառավարման անցնելու տարբերակը, որի դեպքում գործադիր իշխանության լծակները կբաշխվեն նախագահի եւ հաղթած կուսակցության ձեւավորած կառավարության միջեւ»:

Դրանով իսկ ակնարկվում է, որ, հնարավոր է, Իլհամ Ալիեւը մի ժամկետով թողնի նախագահի պաշտոնը եւ «հաղթելով խորհրդարանական ընտրություններում՝ կազմավորի կառավարություն եւ դառնա վարչապետ»: Բնականաբար՝ վերահսկվող որեւէ մեկին նախագահ կարգելուց հետո: Այսպես թե այնպես, ընդդիմադիր թերթի աղբյուրների հավաստմամբ, արդեն գալիք տարվա առաջին նստաշրջանում «հայեցակարգը» ներկայացվելու է խորհրդարանի «քննարկմանն ու հաստատմանը, իսկ բոլոր հարցերին պատասխան է տրվելու մինչեւ 2012-ի տարեվերջ»:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# «Նահապետի կանխատեսումը»

*1-ին էջից*

Գուլուզադեի վարկածով՝ «ահա-ահա կխորտակվի Ասադի ռեժիմը, Իրանը կախված է մազից, այդ իրավիճակում Հայաստանը գործնականում կորցնում է տարածաշրջանի իր բոլոր դաշնակիցներին, քանի որ Իրանը եւ Սիրիան, փոխակերպվելով այսպես կոչված արեւմտամետ երկրների, ինքնաբերաբար կդառնան Ադրբեջանի դաշնակիցներ»:

Արցախցիները նման դեպքերում ասում են. ««Եթե»-ն որ ցանես, ցորեն չի բուսնի»: Այո, քիչ է հավանական Բաշար Ասադի ռեժիմի «խորտակումը», իսկ Իրանի հարցում Գուլուզադեի ասածն ընդամենը երազանք է: Բացի դրանից՝ ոչ ոք չի կարող երաշխավորել, թե ինչ-ինչ զարգացումների դեպքում այդ երկրներն «ինքնաբերաբար կդառնան Ադրբեջանի դաշնակից»:

Բայց մեկ անգամ գայթակղության տրվելով Գուլուզադեն արդեն անկարող է զսպել «հաճույք ստանալու» ցանկությունը: Նա, ըստ այդմ, Հայաստանի մոտեցումների «փոփոխության ազդակ» է համարում... Սերժ Սարգսյանի այցը Վրաստան: Սա արդեն խորացած զառամախտի դրսեւորում է: Ի՞նչ կապ ունի նախագահի Սարգսյանի վրացական այցը ԼՂ հարցում Հայաստանի դիրքորոշման «փոփոխության» հետ: Մի՞թե Վրաստանն այն երկիրն է, որ նման ազդեցություն կամ ցանկություն կարող է դրսեւորել: Մի բան էլ ավելի՝ մի՞թե հենց Վրաստանի միջոցով է, որ Հայաստանը «պետք է դիրքորոշում փոխի»: Հայ-վրացական հարաբերություններում նման «ենթատեքստի մուծումը» միանշանակորեն Գուլուզադեի երեւակայության արդյունքն է: Ինչպես եւ այն, որ նա «մեղմացում» է տեսնում նաեւ Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշման մեջ:

Այստեղ արդեն նա պարզապես նենգափոխում է: Քանի որ եթե որոշակի «մեղմացման» մասին հարկ կա խոսելու, ապա դա վերաբերում է Ադրբեջանի հոգեւոր առաջնորդի երեւանյան այցին եւ Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի հետ նրա ստորագրած հռչակագրին, որտեղ, մասնավորապես, խոսք կա առաջնային գծից դիպուկահարներին հեռացնելու անհրաժեշտության մասին: Մի բան, որ պաշտոնական Բաքուն մերժելով մերժում էր:

Մի խոսքով, Գուլուզադեի «քաղաքագիտական վերլուծություններ ու կանխատեսումները» մղում են երկու եզրակացության: Նախ, ադրբեջանական վերլուծաբանական հանրությունը, որ իշխանությունների խոսափողն է, շարունակում է կառչած մնալ «հրաշքի» սպասումներից: Երկրորդ, այդ երկրում չեն խորշում հրապարակավ խոստովանել, որ մտադիր են «սեփական երջանկությունը կառուցել ուրիշների դժբախտության հաշվին»: Սիրիայի եւ Իրանի վերաբերյալ «նահապետի» հնչեցրած «կանխատեսումները» վերջին մտահանգման պարզ վկայությունն են:

Այս դեպքում ոչ միայն հարեւան երկրները, այլեւ ողջ միջազգային հանրությունն է պարտավոր համարժեք վերաբերմունք դրսեւորել: Քանի որ ադրբեջանական կողմի մտասեւեռումներն առ ապոկալիպտիկ զարգացումներ կրում են ոչ թե ընտրովի բնույթ, այլ համակարգային են. Ադրբեջանում հանուն սեփական «ձեռքերը ջերմացնելու» պատրաստ են «հրդեհել» ողջ տարածաշրջանը: Նման վերաբերմունքի դեմ տարածաշրջանի երկրների, միջազգային հանրության միավորումն, այսպիսով, գնալով ավելի ու ավելի օրակարգային է դառնում:

# Բրիտանացի երեխաների 1/3-ը ոչ մի գիրք չունի

Մեծ Բրիտանիայում երեխաների 1/3-ը ոչ մի գիրք չունի: Այս հետեւությանն է հանգել երկրի Գրագիտության ազգային հիմնադրամը 8-16 տարեկան մոտ 18 հազար երեխաների ու դեռահասների հարցում անցկացնելուց հետո:

Հարցման մասնակիցների 33,2 տոկոսը ոչ մի գիրք չունի: Հետազոտության արդյունքների հիման վրա հիմնադրամը ենթադրում է, որ ընդհանուր առմամբ 3,8 միլիոն բրիտանացի երեխաներ գրքազուրկ են: Հիմնադրամը վերջին անգամ նման հարցում անցկացրել էր 7 տարի առաջ: Այն ժամանակ պարզվել էր, որ հարցման տասը մասնակցից մեկը սեփական գրքեր չունի: 2004-ի հետազոտությանը մասնակցել էին մոտ 8 հազար երեխաներ եւ դեռահասներ:

2011-ի հետազոտությունը նաեւ ցույց տվեց, որ աղջիկները տղաներից հաճախ են գրքեր ունենում, եւ որ գիրք ունեցող աշակերտներն ավելի լավ են սովորում: Բացի դրանից, գիտնականները պարզել են տանը գտնվող գրքերի քանակի եւ դեռահասի ընթերցասիրության մակարդակի փոխադարձ կապը. որքան շատ են գրքերը, այնքան բարձր է մակարդակը:

«Դեյլի թելեգրաֆ» թերթը նշում է, որ հետազոտության տվյալները վշտացրել են բրիտանացի բազմաթիվ գրողների ու լրագրողների: Մասնավորապես Ջորջ Մոնբիոն հարցման արդյունքներն անվանել է «ողբերգական», նշելով, որ երեխաներն ու դեռահասները ձեռքից բաց են թողնում ամենահետաքրքրական զբաղմունքներից մեկը:

ШакОм²-¸²Ш²кОак

# Ռուսական երկու ռազմանավ շարժվում է դեպի Սիրիա

## *Total-ը հեռանում է այնտեղից*



**Հյուսիսային նավատորմի երկու ռազմանավ շարժվում է դեպի Միջերկրական ծով: Ծանր ավիակիր «Ադմիրալ Կուզնեցովը» եւ հակասուզանավային ռազմանավ «Ադմիրալ Չաբանենկոն» պետք է մուտք գործեն սիրիական Տարտուս քաղաքի ռուսական ռազմակայան: ՌԴ պաշտպանության նախարարությունում ՌԻԱ գործակալության թղթակցին ասել են, որ տվյալ այցելությունը բնավ կապված չէ Սիրիայի իրադրության սրման հետ: Խոսքը նախապես (2010-ին) ծրագրված զորավարժությունների մասին է, որոնց ընթացքում որոշ ռազմանավեր կմտնեն Տարտուս նավահանգիստ: Ռուսաստանը 1970-ականներից այնտեղ ունի նյութատեխնիկական ապահովման կետ (շարժական նավամատույցներ, արհեստանոց եւ թիկունքային պահեստարաններ):**

**Ծովային զորավարժությունների զգալի մասը նվիրված կլինի օդուժի թռիչքներին: Հիշյալ ավիակիրն ընդունում է «Սու-33» տիպի 8 տախտակամածային կործանիչ եւ «Կա-27» տիպի 2 հակասուզանավային ուղղաթիռ: Տախտակամածային ավիացիայի թռիչքները կավարտվեն Համաշխարհային օվկիանոսի տարբեր շրջաններում:**

**Սիրիայի առնչությամբ նաեւ հաղորդվում է, որ ֆրանսիական Total նավթային ընկերությունը այդ երկրում դադարեցնում է գործունեությունը՝ հետեւելով հակասիրիական տնտեսական պատժամիջոցներն ընդլայնելու ԵՄ որոշմանը: Total-ը դադարեցրել է համագործակցությունը Սիրիայի պետական նավթային կորպորացիայի հետ: Ավելի վաղ համանման հայտարարություն էր արել Royal Dutch Shell նավթային ընկերությունը:**

**Total-ը եւ Royal Dutch Shell-ը Սիրիայի շուկայում աշխատած խոշորագույն նավթային ընկերություններն էին, նշում է BBC-ն:**

**Պ. Ք.**

# Իրանում ընկել է ԿՀՎ-ի անօդաչու սարք



**Իրանի արեւելքում կիրակի օրը շարքից հանվել է անօդաչու սարք, որը պատկանում է ԿՀՎ-ին: Այդ մասին հաղորդում է NBC հեռուստաալիքը, վկայակոչելով ամերիկացի պաշտոնական անձանց:**

**Հեռուստաալիքի աղբյուրներից մեկի խոսքերով՝ իրանցի զինվորականների ձեռքն անցած RQ-170 Sentinel սարքը կատարելիս է եղել գաղտնի առաջադրանք (Իրանում թե Աֆղանստանում՝ չի մանրամասնվում):**

**NBC-ի աղբյուրը կարծում է, որ սարքը դուրս է եկել ամերիկացի հետախույզների վերահսկողությունից եւ խորացել Իրանի տարածքում: Երբ վառելիքը սպառվել է, սարքը ընկել է երկրի արեւելքի լեռնային տեղանքում: Ավելի վաղ իրանական լրատվամիջոցները հաղորդել էին թռչող սարքի ոչնչացման մասին, բայց ԱՄՆ-ը չէր հաստատել այդ լուրերը:**

**Ամերիկացի մասնագետները վախենում են, որ թռչող սարքի շնորհիվ իրանցի զինվորականների ձեռքը կանցնեն գաղտնի տեխնոլոգիաներ, այդ թվում դիտախցիկներ, զանազան տվիչներ եւ անմիջականորեն «անտեսանելիության» տեխնոլոգիան, ինչը անօդաչու թռչող սարքին թույլ է տալիս աննկատ մնալ ռադիոտեղորոշման միջոցների համար: Ավելի վաղ հաղորդվել էր, որ սարքը իրանցի զինվորականների ձեռքն է անցել աննշան վնասվածքներով:**

**NBC-ի տվյալներով, ամերիկյան ուժերը Պակիստանում մի քանի ամիս նման թռչող սարք են օգտագործել Ուսամա բեն Լադենի առանձնատան անցուդարձին հետեւելու նպատակով:**

**«Լոքհիդ Մարտին» ընկերությունում մշակված RQ-170 Sentinel թռչող սարքը ամերիկացիներն Աֆղանստանում օգտագործում են 2007-ից: Մինչեւ 2009-ի վերջը ԱՄՆ-ը չէր խոստովանում սարքի գոյությունը եւ գաղտնի էր պահում դրա տեխնիկական բնութագրերը: Ըստ «Վաշինգտոն փոստ» թերթի, սարքի մասին հայտնի է միայն, որ դրա իրանի հատուկ ծածկույթը թույլ է տալիս անտեսանելի մնալ ռադարների «տեսադաշտում»:**

ՓԱՐԻԶ

# Անիի Մայր տաճարի եւ Ամենափրկիչ եկեղեցու վերաբերյալ

## *ԻԿՕՄՕՍ-ի 17-րդ Գլխավոր ասամբլեան ընդունել է բանաձեւ*



Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ն. Սարկոզիի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Ի. Բոկովայի հովանու ներքո, ինչպես նաեւ ԻԿՕՄՕՍ/Ֆրանսիայի հրավերով 2011թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը Փարիզում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի նստավայրում, իր 17-րդ Գլխավոր ասամբլեան գումարեց Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը՝ ԻԿՕՄՕՍ-ը:

109 երկրների 1120 պատվիրակներ լիազոր նիստերով ընթացող Գլխավոր ասամբլեայի աշխատանքներին զուգահեռ մասնակցեցին նաեւ «Ժառանգությունը զարգացման շարժիչ» գիտաժողովին:

«Ժառանգությունը զարգացման շարժիչ» գիտաժողովը, որն ընթանում էր 4 ենթաթեմաներով, ժառանգության պահպանների ստվար լսարանին ներկայացրեց շուրջ 65 զեկուցումներ՝ աշխարհի ամենատարբեր անկյուններում ժառանգության պահպանության հաջողված կամ ձախողված փորձի վերաբերյալ:

Գլխավոր ասամբլեան ավարտվեց ԻԿՕՄՕՍ/Ճապոնիայի անդամ Նոբուո Իտոյին Պիեռո Գազզոլայի մրցանակի շնորհմամբ, որը, ի հիշատակ ԻԿՕՄՕՍ-ի հիմնադիրներից Պ. Գազզոլայի, 1979 թվականից տրվում է ժառանգության բնագավառում մեծ ավանդ ունեցող որեւէ պրոֆեսիոնալի: 2012-2014թթ. համար ԻԿՕՄՕՍ-ի նախագահ է վերընտրվել Գուստավո Առաոզը (ԻԿՕՄՕՍ/ԱՄՆ):

Գլխավոր ասամբլեան քննարկեց եւ ընդունեց 41 բանաձեւեր, որոնք վերաբերում էին ինչպես կազմակերպական եւ տեսական, այնպես էլ ժառանգության պահպանության առանձին դեպքերի: «Ժառանգության սպառնալիքներ» բաժնում ընդունվեց նաեւ ԻԿՕՄՕՍ/Հայաստանի կողմից առաջարկված բանաձեւը՝ Անիի Մայր տաճարի եւ Ամենափրկիչ եկեղեցու վերաբերյալ: Բանաձեւի քվեարկության ժամանակ թուրք պատվիրակ, Ստամբուլի Յիլդիզի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Կան Բինանը հանդես է եկել առաջարկով՝ բանաձեւում ներառել առանձին պարբերություն՝ Հայաստանի կողմից Անիի քարհանքում պայթեցումները դադարեցնելու պահանջով:

ԻԿՕՄՕՍ/Հայաստանի գլխավոր քարտուղար Համլետ Ազիզյանը, որ 17-րդ Գլխավոր ասամբլեայում ներկայացնում էր ԻԿՕՄՕՍ/Հայաստանը, ի պատասխան թուրք գործընկերոջ առաջարկի հանդես է եկել ելույթով եւ տեղեկացրել, որ քարհանքի շահագործումը դադարեցված է, ինչպես նաեւ կոչ է արել պատվիրակներին քվեարկել Հայաստանի բանաձեւի օգտին: Գլխավոր ասամբլեան հավանության չի արժանացրել թուրք պատվիրակի առաջարկը եւ դահլիճի բացարձակ մեծամասնությամբ ընդունվել է ԻԿՕՄՕՍ/Հայաստանի առաջարկած բանաձեւը: Նրանում հիմնականում տեղ են գտել բոլոր այն հիմնահարցերը, որ վերաբերում են Անիի Մայր տաճարին եւ Ամենափրկիչ եկեղեցուն:

Այսպիսով, ԻԿՕՄՕՍ-ի 17-րդ Գլխավոր ասամբլեայում Անիի հիշյալ երկու տաճարների վերաբերյալ ընդունված բանաձեւը հիմնականում հետեւյալ տեսքն ունեցավ.

«Նկատի ունենալով նաեւ Անիի ուշագրավ ժառանգության պահպանության եւ պաշտպանության ուղղությամբ Անիի Մայր տաճարի եւ Ամենափրկիչ եկեղեցու ամրակայման եւ վերականգնման հրատապ միջոցների անհրաժեշտությունը:

Որոշում է դիմել ԻԿՕՄՕՍ-ի նախագահին՝ Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարության հետ, ԻԿՕՄՕՍ/Հայաստանի ու ԻԿՕՄՕՍ/Թուրքիայի, ինչպես նաեւ ԻԿՕՄՕՍ-ի համապատասխան գիտական կոմիտեների, WMF-ի եւ միջազգային այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ, կազմել միջազգային մասնագետների խումբ հետեւյալ նպատակով.

ա) ազգային եւ միջազգային կոմիտեներից, ներառյալ Հայաստանի եւ Թուրքիայի ազգային կոմիտեները, մասնագետների խմբի միջոցով խրախուսել պահպանության եւ վերականգնման պրոֆեսիոնալ պարտավորությունը՝ Անիի մայր տաճարի եւ Ամենափրկիչ եկեղեցու վերականգնման աշխատանքներում (Արեւելյան Անատոլիա, Թուրքիա), եւ

բ) այս միջազգային համագործակցության արդյունքները դարձնել մատչելի՝ որպես ժառանգության պահպանության եւ պաշտպանության բնագավառում համագործակցության ու փոխըմբռնման օրինակ»:

**Պատրաստեց՝**
**Ս. ՄԱԿԱՐՅԱՆ**

*Այցեքարտ.- Լոլա Գունտաքճեան: Ծնուել է Բէյրութում, ուսանել Նշան Փալանճեան ճեմարանում (մինչեւ 10-րդ դասարանը): 1979 թուականից բնակւում է ԱՄՆում, որտեղ աւարտել է միջնակարգ կրթութիւնը: Ուսանել է Հանթեր քոլեջում եւ Քոլումբիայի համալսարանում: Այժմ բնակւում է Նիւ Եորքում: Քոլումբիայի համալսարանի հայագիտական ծրագրի խորհրդի անդամ է երկու տարուց ի վեր. 16 տարի է «Արարատ» գրական եռամսեայ թերթի խմբագրութեան անդամ է եւ մէկ տարուց ի վեր՝ համացանցային հանդէսի բանաստեղծութեան բաժնի պատասխանատու: Հրատարակել է բանաստեղծութիւններ եռալեզու ժողովածու «The Accidental Observer» («Պատահական վկան») վերնագրով՝ «Հիւսիսային Մանհաթընի արուեստների ընկերակցութեան» դրամաշնորհը շահելուց յետոյ: 2006ին նախաձեռնել է «Հայ բանաստեղծութեան համացանց» առցանց նախագիծը (http://armenian-poetry.blogspot.com/), որն ընդգրկում է տարբեր ժամանակների հայ եւ հայազգի բանաստեղծների գործեր՝ հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն բնագրերով (ոմանք՝ թարգմանութիւններով), տպագրուած շարադրանքը՝ երբեմն բանաստեղծութեան ձայնագրութեամբ հանդերձ (ընդգրկում է 168-ից աւելի ձայնագրութիւն):*

# Լոլա Գունտաքճեան. «Գրողին ամենակարեւոր ընկերը առանձնութիւնն է»

**- Սիրելի Լոլա, համացանցով երբեւէ հայ բանաստեղծութեան որեւէ նմոյշ որոնողն անպայման հանդիպում է քո աննախադէպ նախաձեռնութեանը: Ինչպէ՞ս որոշեցիր մեն-մենակ նետուել այդ հսկայական գործի մէջ:**

- Առաջին անգամ որ նոր համացանցային blog եւ RSS.ի մասին լսեցի, ուզեցի այս նորութիւնները փորձել: Մի քանի շաբաթ ետք տեսայ, որ շատ մը կարդացողներ ունի blog.ը եւ այդ զիս քաջալերեց: Հայ ժողովուրդի մէջ բանաստեղծութեան ծարաւ մը կայ, ու կարդացողները իրենց ներկայութիւնն ու սէրը կ՛արտայայտեն իրենց այցելութեամբ:

**- «Հայ բանաստեղծութեան համացանցը» աննախընթաց նորարարութիւն եւ աննախադէպ նախագիծ է: Ի՞նչ սկզբունքով ես ընտրում հեղինակներին:**

- Սկիզբը տունս ինչ որ գիրք ու թերթ ունէի, սկսայ պրպտել. առաջին խումբը բանաստեղծներու զարթօնքի շրջանէն մինչեւ իրապաշտ շրջանի բանաստեղծներն էին: Մուշեղ Իշխանին կը պարտիմ իր խմբագրած երեք հատորնոց արդի հայ գրականութիւն վերնագրով դասագիրքերը: Ունիմ նաեւ թերթերէ նմոյշներ՝ «Հորիզոն», «Բաց նամակ», «Բագին», «Ազդակ» եւ, անշուշտ, «Արարատ»: Կայքէջը սկսելէ ի վեր գրողներու հետ կը նամակցիմ ու կը հանդիպիմ, օրինակ, Երեւան, Մոնթրէալ ու Լոս Անճըլըսի մէջ:

**- Ի՞նչ ընթերցողական լսարան ունի «Հայ բանաստեղծութեան համացանցը»:**

- Կարդացողները հարիւրէ աւելի երկիրներու մէջ կ՛ապրին ըստ վիճակագրութեան: 2011-ի նոյեմբերին 300,000 է աւելի այցելութիւն ունեցած է եւ աւելի քան 1,700 գործեր կան հոն: Գործերը հեղինակներու անունով կազմակերպուած են, ինչպէս նաեւ երկիրներու անունով:

**- Զոյգ ուղղագրութիւնները դժգոհութիւն չե՞ն առաջացնում:**

- Դասական ուղղագրութիւն գործածողները աւելի կը դժգոհին: Կը փորձեմ գրողին գործածած ուղղագրութիւնը պահել:

**- Այս ծրագրից բացի դու եռանդուն կերպով մասնակցում ես գրական կեանքին: Եթէ չեմ սխալւում, անցեալ տարի Կոլումբիայում կայացած բանաստեղծների միջազգային համաժողովին միակն էիր, որ ներկայացնում էր հայ ժողովրդին:**

- 2009 հոկտեմբերին հրաւիրուեցայ եւ 2010 յունիսին մասնակցեցայ 10 օր տեւող Քոլումբիայի Մէտային քաղաքի 20-րդ տարեկան բանաստեղծութեան համաշխարհային փառատօնին: Մի քանի ուրիշ քաղաքներու մէջ ալ ձեռնարկներ եղան: Ես ընդամէնը 8 անգամ կարդացի, 7 անգամ Մէտայինի մէջ ու մէկ օր՝ Սանտա Մարթա քաղաքին մէջ: Կրնաք տեսնել՝ http://www.festivaldepoesiademedellin.org/: Եւ նաեւ հոս՝ http://www.festivaldepoesiademedellin.org/pub.php/en/Festival/XX–Festival/Biblio/index.html

Առաջին հայն եմ, որ հոն հայերէն գործեր կը ներկայացնէր, որովհետեւ զուիցերահայ Վահէ Կոտելը հոն 1998-ին ներկայացուցած էր իր գործերը ֆրանսերէնով:

**- Համացանցը հրաշալի միջոց է մեր գրականութիւնն ու մշակոյթը յայտնի դարձնելու գործում: Ուրիշ ի՞նչ եղանակով ես տեսնում մեր ազգային արժէքներն աւելի լայն ճանաչման արժանացնելու գործը:**

- Գրողներու կողմին գիրքերու եւ թարգմանութիւններու պէտք ունինք: Մեր գրողները պէտք ունին աշխարհը շրջելու, դասախօսելու, գիրքեր տպելու, դասաւանդելու եւ ծանօթանալու ուրիշ երկիրներու մէջ ապրող (այսինքն ոչ հայ) գրողներու: Հայերու որոշ գաղութներու մէջ մեկուսի կ՛ապրինք:

**- Շնորհաւորում եմ այս տարի քո լոյս տեսած առաջին բանաստեղծական ժողովածուի առթիւ: Այն եռալեզու է՝ հայերէն, անգլերէն, իսպաներէն: Յուսամ՝ արձագանգները դրական են:**

- Շնորհակալ եմ: Փոքր արձագանգներ եղան տարբեր տեղերէ՝ Հիւսիսային Ամերիկա, Լիբանան եւ Հայաստան:

**- Ե՞րբ, ինչպէ՞ս եւ ինչո՞ւ ես գրում:**

- Ինչպէս գիտես, գեղարուեստական աշխարհս կայի շուրջ էր, տարիներով բրուտ էի մինչեւ այն օրը (մօտ 6-7 տարի առաջ), երբ սկսայ միմիայն գրելով զբաղիլ: 19-20 տարեկանիս սկսայ բանաստեղծութիւններ գրել. այդ առաջին փորձերը մի քանի ընկերներ կարդացին. կը մնան անտիպ ու այդպէս ալ պէտք է մնան, որովհետեւ առաջին փորձեր են վերջապէս:

Ըսեմ, որ այս օրերուն երթալէն աւելի դժուար է գրող ըլլալ: Ամէն տեսակի պատկերդրոննանալու պատճառներ ու միջոցներ ունինք. գործէ եւ ընտանեկան պատասխանատուութիւններէն անդին, նոր ու նոր բաներ սկսած են պարտադրուիլ մեր կեանքին: Երբ փոքր էինք, հեռատեսիլն ու ռադիոն այդ դերը կը կատարէին, իսկ այսօր ունինք Ֆէյսբուք (Դիմագիրք), Սքայփ, եւայլն: Գրողին ամենակարեւոր ընկերը առանձնութիւնն է՝ ամփոփուիլ ու գրել, գիրք կարդալ ու մտածել - առանց գրողը ընդհանրապէս առանձին կ՛ըլլայ կամ շրջապատուած անծանօթներով:

**- Եւ վերջում կասե՞ս քո ստեղծագործական ծրագրերի մասին:**

- Երկրորդ գիրքիս վրայ կ՛աշխատիմ: Սկսած եմ երկու երաժիշտներու հետ փորձեր կատարել: ՀԲՀ-ի գրելու մրցումին երրորդ տարուան ծրագիրները պիտի մշակեմ եւ կը յուսամ համալսարանականներու հետ կրկին աշխատիլ: Սկսած եմ նոր՝ Գիրք մը/հեղինակ մը շաբքին վրայ աշխատիլ: Գալով «Արարատին»՝ կը փորձեմ հետաքրքրական գործեր ու տաղանդաւոր գրողներ գտնել:

**ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ**
**ԱՄՆ**

# Նամակ խմբագրությանը

Զարմանքով ծանոթացա «**Ազգ**»-ում տպված Լորիս Ճգնավորյանի մասին հոդվածին սույն թվի դեկտեմբերի 2-ի համարում: Զարմանքս վերաբերում էր այն անտարբերությանը, որին արժանացել է սիրված մաեստրոն: Ճգնավորյանը այն փոքրաթիվ սփյուռքահայերից էր, որոնք անկախությունից հետո եկան Հայաստան: Ցուրտ ու մութ տարիներին ֆիլհարմոնիայի դահլիճը այն օազիսն էր, որը ամեն շաբաթ ձգում էր տաքության եւ գեղեցիկի կարոտ երեւանցիներին: Մեր միակ տոնն էր, որը գոյություն ուներ ընդհանուր անասելի դժոխային մթնոլորտում: Ճգնավորյանը եւ երեւանցիները երկուստեք գտան իրար եւ երկուստեք այդ համերգներից շահեցին: Ճգնավորյանը սովորական համերգներից բացի, որոնց նվագախմբից բացի մասնակցում էին նաեւ երգիչներ եւ երգչուհիներ, կազմակերպում էր նաեւ նշանավոր անձանց նվիրված համերգ-մեծարումներ: Հիշում եմ Վիկտոր Համբարձումյանին, Սիլվա Կապուտիկյանին, Էդուարդ Միրզոյանին, Ալեքսանդր Հարությունյանին նվիրված հոյակապ համերգները: Ճգնավորյանը ֆիլհարմոնիայի ճեմասրահում կազմակերպում էր նաեւ նկարիչների ցուցահանդեսներ:

Չի կարելի թույլ տալ, որ այդ արժանի մարդը մնա դառնացած: Առաջին բանը, որ կարելի է անել, համերգ-մեծարում կազմակերպել ազգանվեր գործիչ եւ ժողովրդի կողմից սիրված եւ հարգված մաեստրո Լորիս Ճգնավորյանի պատվին:

**Ա. Լ. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ**
**Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր**
**6 դեկտեմբերի**

# Մարզական

# Արոնյանը մատ հայտարարեց Շորթի արքային




Լոնդոնում ընթացող շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Լեւոն Արոնյանն անդրանիկ հաղթանակը տոնեց՝ 60-րդ քայլին մատ հայտարարելով անգլիացի Նայջըլ Շորթին, ինչը նման բարձր կարգի մրցումներում հազվադեպ երեւույթ է: Այդ հաղթանակի շնորհիվ Արոնյանը զգալիորեն բարելավեց դիրքերը՝ 4 միավորով 3-5-րդ տեղերը բաժանելով Վլադիմիր Կրամնիկի եւ Հիկարու Նակամուրայի հետ:

2-րդ հաղթանակը տոնեց Մագնուս Կառլսենը, որը պարտության մատնեց Հիկարու Նակամուրային: Կառլսենը 7 միավորով միանձնյա գլխավորում է մրցաշարային աղյուսակը: 2-րդ տեղում 5 միավորով անգլիացի Լյուկ Մակշեյնն է, որը սեւերով հաղթեց իր հայրենակից Մայքլ Ադամսին: Տուրի միակ ոչ-ոքին գրանցվեց Վիշվանաթան Անանդի եւ Դեւիդ Հաուելի մրցավեճում: Ինչպես Միխայիլ Տալի հուշամրցաշարում, Լոնդոնում էլ Անանդն առայժմ խաղաղասիրաբար է տրամադրված՝ երկու պարտիաներն էլ ավարտելով ոչ-ոքի: Նա Մայքլ Ադամսի եւ Դեւիդ Հաուելի հետ վաստակել է 2 միավոր: Հետնապահը Նայջըլ Շորթն է, որը պարտվել է անցկացրած 2 պարտիաներում էլ:

4-րդ տուրում Լեւոն Արոնյանը կհանգստանա: Իսկ տուրի կենտրոնական պարտիան կլինի Կառլսենի եւ Կրամնիկի մրցավեճը:

## Լիոնել Մեսին հավանաբար կրկնի Միշել Պլատինիի արդյունքը

Փարիզում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարվել են «Ոսկե գնդակի» եւ լավագույն մարզչի կոչման համար անցկացված քվեարկության արդյունքները, որոնց մասնակցել են աշխարհի տարբեր երկրների ազգային հավաքականների գլխավոր մարզիչներն ու ավագները:




«Ֆրանս ֆուտբոլի» եւ ՖԻՖԱ-ի համատեղ մրցանակի՝ «Ոսկե գնդակի» համար կպայքարեն քվեարկության արդյունքներով առավելագույն քանակի ձայներ ստացած 3 ֆուտբոլիստները: Ինչպես եւ սպասվում էր, հավակնորդների եռյակը կազմել են Լիոնել Մեսին, Քրիստիանու Ռոնալդուն եւ Խավին: Իսկ լավագույն մարզչի տիտղոսին հավակնում են Խոսեպ Գվարդիոլան, Ժոզե Մոուրինյուն եւ Ալեքս Ֆերգյուսոնը: Լավագույնները հայտնի կդառնան 2012-ի հունվարի 9-ին Ցյուրիխում կայանալիք մրցանակաբաշխության ժամանակ: Այն ավանդաբար Շվեյցարիայում է անցկացվում 1991-ից:

Որոշվել են նաեւ կանանց ֆուտբոլի մրցանակների հավակնորդուհիները: 2011-ի լավագույն ֆուտբոլիստուհի կճանաչվի եռյակում ընդգրկվածներից մեկը՝ բրազիլացի Մարթան, ճապոնացի Խոմարե Սավան կամ ամերիկացի Էբի Ուոմբախը: Լավագույն մարզչի մրցանակին հավակնում են Բրյունո Բինին (Ֆրանսիա), Նորիո Սասակին (Ճապոնիա) եւ Պիա Սունդհագեն (Շվեդիա):

Ցյուրիխում այլ մրցանակներ եւս կհանձնվեն: Ֆերենց Պուշկաշի անվան մրցանակին (ամենագեղեցիկ գոլի համար) հավակնում են Մեսին, բրազիլացի Նեյմարը եւ անգլիացի Ուեյն Ռունին: Կհրապարակվի աշխարհի խորհրդանշական հավաքականի կազմը: Հատուկ մրցանակ կհանձնվի ՖԻՖԱ-ի նախագահի անունից, ինչպես նաեւ հայտնի կդառնա «Արդար խաղի» մրցանակի տերը:

Հիշեցնենք, որ «Ոսկե գնդակ» մրցանակը հիմնել է հանրահայտ «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթը 1956-ին: Այն նախատեսված էր Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի համար: 1995-ից սկսած մրցանակին կարող էին տիրել նաեւ ոչ եվրոպացի ֆուտբոլիստները, որոնք հանդես էին գալիս եվրոպական ակումբներում: Հենց այդ տարի հաղթող ճանաչվեց լիբերիացի Ջորջ Վեան: Իսկ 2007-ից սկսած մոլորակի ցանկացած ֆուտբոլիստ կարող էր հավակնել մրցանակին:

Քիչ չէին դեպքերը, երբ «Ոսկե գնդակին» եւ ՖԻՖԱ-ի «Ադամանդե գնդակին» միաժամանակ տիրում էին նույն ֆուտբոլիստները: Ուստի պատահական չէ, որ անցյալ տարի որոշվեց մրցանակը միավորել եւ այն հանձնել աշխարհի լավագույն ֆուտբոլիստին: Իսկ ՈՒԵՖԱ-ն նոր մրցանակ սահմանեց՝ հանձնելով Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստին, որի առաջին դափնեկիրը Լիոնել Մեսին էր:

Ի դեպ, եթե Մեսին կրկին ստանա «Ոսկե գնդակը», ապա նա կկրկնի ՈՒԵՖԱ-ի ներկայիս նախագահ Միշել Պլատինիի ցուցանիշը, որը 3 տարի (1983-1985-ին) անընդմեջ արժանացել է պատվավոր մրցանակին: Նույնքան անգամ, բայց ոչ անընդմեջ, դափնեկիր են դարձել նաեւ հոլանդացիներ Յոհան Կրոյֆն ու Մարկո վան Բաստենը: Եթե Մեսին կամ Խավին դառնան «Ոսկե գնդակի» դափնեկիր, ապա «Բարսելոնի» ֆուտբոլիստները յուրօրինակ այդ մրցույթում կդառնան առաջատար՝ գերազանցելով «Յուվենտուսին» եւ «Միլանին»:

## Ֆուտբոլասերները նախապատվությունը տվեցին երկրի վարչապետին

Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովը ֆուտբոլասերների միջեւ անցկացված հարցման արդյունքներով ճանաչվել է տարվա լավագույն ֆուտբոլիստ: Երկրի կառավարության ղեկավարի օգտին ձայն է տվել հարցման մասնակիցներից 3501-ը կամ 44 տոկոսը: Հետաքրքրական է, որ վարչապետը ստացած ձայների թվով գերազանցել է «Մանչեսթր Յունայթեդի» հարձակվող Դիմիտար Բերբատովին: Նրա օգտին քվեարկել էր 1955 ֆուտբոլասեր (24 տոկոսը):

Բոյկո Բորիսովը Բիստրիցայի «Վիտոշ» թիմի ֆուտբոլիստ է, որը հանդես է գալիս Բուլղարիայի առաջնության 3-րդ խմբում: Վարչապետը բազմիցս խաղադաշտ է դուրս եկել ու հաջողությամբ պաշտպանել է թիմի մարզական պատիվը:

52-ամյա Բոյկո Բորիսովը հրաժարվել է լավագույն ֆուտբոլիստի համար պայքարից. «Շնորհակալ եմ ֆուտբոլասերներից նման վստահության համար: Հասկանում եմ, որ սա արտահայտում է ազգի բողոքը բուլղարական ֆուտբոլի ճգնաժամային վիճակի դեմ: Հարկավոր է փոփոխություններ կատարել այդ մարզաձեւում, որպեսզի կրկին բարձր մակարդակի ֆուտբոլ ունենանք: Այնպես որ ինձ չեն ընտրել որպես լավագույն ֆուտբոլիստ: Կարծում եմ, որ քվեարկության արդյունքները հարկավոր է չեղյալ համարել»:

Այժմ բուլղարացի լրագրողները պետք է ֆուտբոլասերների ընտրած 20 լավագույն ֆուտբոլիստներից ընտրեն երկրի այս տարվա լավագույն խաղացողին, որի պարգեւատրման արարողությունը նախատեսված է դեկտեմբերի 23-ին Սոֆիայում: Նշենք, որ 20 լավագույնների ցանկից դուրս են մնացել Գրոզնու «Թերեքում» հանդես եկող Բլագոյ Գեորգիեւը եւ Լիսաբոնի «Սպորտինգի» խաղացող Վալերի Բոժինովը:

### ՇԱԽՄԱՏ

## Վահանյանն անդրանիկ հաղթանակը տոնեց

**Չեխիայում անցկացվող շախմատի յուրօրինակ մրցախաղում Ռաֆայել Վահանյանն անդրանիկ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Նատալյա Պոգոնինայի նկատմամբ: Վետերանների թիմի կազմում իր անդրանիկ հաղթանակը տոնեց նաեւ Բորիս Գուլկոն՝ պարտության մատնելով Եվա Կուլովանային: Հյուբներ-Մուզիչուկ, Հորտ-Սաչդեւա պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Այսպիսով, վետերանները 3-րդ տուրում 3-1 հաշվով հաղթեցին «Ձնծաղիկներին» եւ այժմ մրցախաղը շահում են 3 միավորի առավելությամբ (7,5-4,5):**

**4-րդ տուրում Վահանյանը կմրցի Տանյա Սաչդեւայի հետ: Անհատական հաշվարկով վետերաններից 2-ական միավոր են վաստակել Հյուբները, Հորտն ու Գուլկոն, շախմատիստուհիներից՝ Մարիա Մուզիչուկը: Վահանյանն ունի 1,5 միավոր:**

## Հաղթական տուր հայ շախմատիստների համար

**Լվովում ընթացող Միխայիլ Վասիլիշինի շախմատի հուշամրցաշարի 7-րդ տուրում A խմբում հանդես եկող Վահե Բաղդասարյանը սպիտակներով հաղթեց առաջատարների խմբում գտնվող Անդրեյ Վովկին: 7 տուրից հետո Վահեն 4 միավորով Անդրեյ Վովկի, Սպարտակ Յուսոչինի եւ Սերգեյ Չեխովի հետ հետապնդում է առաջատարին՝ 5,5 միավոր ունեցող Յուրի Վովկին: Վերջինս հաշտություն կնքեց Պետեր Մոլնարի հետ:**

**B խմբում հանդես եկող Տիգրան Ս. Պետրոսյանի համար եւս 7-րդ տուրը հաղթական էր: Նա սպիտակներով հաղթեց Եվգենի Շտեմբուլյակին: Տիգրանը 4 միավորով Անտոն Վոլովիկովի հետ բաժանում է 3-4-րդ տեղերը:**

**Առաջատարը Ալեքսեյ Կոսինն է, որը հաղթելով Իգոր Նեստերին, վաստակեց 6,5 միավոր: 6 միավորով 2-րդ տեղում թուրք Բեթյուլ Յիլդիզն է:**

## Յուրա Մովսիսյանը քվեարկության արդյունքներով առաջատարն է




Sovsport.ru կայքը կազմակերպել է քվեարկություն, որի նպատակն է որոշել Ռուսաստանի ֆուտբոլի պրոֆեսիոնալ լիգայի տարվա լավագույն ֆուտբոլիստին: Քվեարկության արդյունքներով առայժմ առաջատարը Կրասնոդարի համանուն թիմի եւ Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանն է:

Այս առնչությամբ ահա թե ինչ է գրում Sovsport.ru կայքը. «Մեր քվեարկության պատմության մեջ դեռեւս այսպիսի դեպք չէր եղել, որ 9-րդ տեղը գրաված թիմի ֆուտբոլիստը դառնար առաջատար: Անկասկած, Յուրա Մովսիսյանը փայլուն մրցաշրջան անցկացրեց՝ պրեմիեր լիգայում հանդես գալու առաջին տարում խփելով 8 գոլ, իսկ Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի կազմում քայքայեց Ռուսաստանի հավաքականի պաշտպանների նյարդերը: Սակայն այս ամենով հանդերձ, պետք է համաձայնվել, որ նրա առաջատար լինելը անսպասելի էր: Այնուամենայնիվ, ո՞րն է Մովսիսյանի հաջողության գաղտնիքը: Շատ ակտիվ են հայ ֆուտբոլասերները: Հավանական է, որ հենց նրանց շնորհիվ էլ Մովսիսյանն այդ քանակությամբ ձայներ է հավաքել»:

Քվեարկությունը կտեւի մինչեւ դեկտեմբերի 27-ը: Հարկ է խոստովանել, որ իրոք հայ ֆուտբոլասերների դերը Մովսիսյանի հաջողությունում մեծ է: Նրանք սովորաբար շատ ակտիվորեն են մասնակցում զանազան ինտերնետային քվեարկություններին՝ աջակցելով արտերկրում հանդես եկող հայ ֆուտբոլիստներին: Դա վերաբերում է նաեւ Հենրիխ Մխիթարյանին, Մարկոսին, Գեւորգ Ղազարյանին:

## Լավագույն ավտոմրցարշավորդը Սեբաստիան Ֆետելն է

Ավտոսպորտի միջազգային ֆեդերացիան իր ամենամյա մրցանակը Լոնդոնում կայացած արարողության ժամանակ հանձնել է «Ֆորմուլա-1» դասի աշխարհի ներկայիս չեմպիոն, «Ռեդ Բուլի» ավտոմրցարշավորդ Սեբաստիան Ֆետելին, որը մարզական կարիերայում 2-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեց: Ֆետելը տարվա լավագույն ավտոմրցարշավորդն է:

«Անկեղծ ասած, չգիտեմ, թե ինչից սկսեմ: Անցած տարի առաջին անգամ այս մրցանակներից մեկը գլխավերեւումս պահեցի: Այս մրցանակն ինձ համար շատ բան է նշանակում: Ես մեծ հարգանք զգացի իմ հանդեպ, երբ ստանում էի մրցանակը, մի խումբ հայտնի ավտոմրցարշավորդներ ծափահարում էին ինձ: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի փորձություններ ենք հաղթահարել այս մրցաշրջանում բազմաթիվ մրցումների ընթացքում: «Ֆորմուլա-1»-ն ինձ համար շատ բան է նշանակում: Սիրում եմ մեքենաները, մրցումները», պարգեւատրումից հետո նշել է Ֆետելը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ Օրվա հետքերով

ՖՈՒՏԲՈԼ

# «Շիրակի» այս տարվա ձեռքբերումը գավաթի եզրափակիչում խաղալն էր

## Ակումբի նախագահ Արման Սահակյանն ամփոփեց անցած մրցաշրջանը

Անցած շաբաթ օրը Գյումրիում ֆուտբոլի 2011 թ. մրցաշրջանի ամփոփիչ ասուլիսով հանդես եկավ «Շիրակ» ակումբի նախագահ **Արման Սահակյանը**: Նա ավարտված մրցաշրջանում թիմի համար լուրջ ձեռքբերում համարեց վերջին 12 տարիների ընթացքում առաջին անգամ Հայաստանի գավաթի եզրափակիչ հասնելը: «Ափսոս, այդ մի խաղը պարտվեցինք, բայց կարծում եմ՝ ուրախանալու առիթ եղավ,- նշեց ակումբի նախագահը: - Այդ ցավալի պարտությունից հետո մեզ մոտ եղավ ծանր շրջան, թիմը յոթ խաղ անընդմեջ պարտություններ կրեց, բայց վերջում նորից մեզ հավաքեցինք, նորից կարողացանք խաղալ»:

Ինչպես հայտնի է, տարվա սկզբից բավական շատ նոր ֆուտբոլիստներ են բերվել «Շիրակ», նաեւ նոր մարզիչ: Ա. Սահակյանը չուզեց թիմում հանդես եկած մարզիկներից որեւէ մեկին առանձնացնել, ըստ նրա՝ բոլորն էլ իրենց չափով լավ խաղացին, բոլորի մոտ էլ եղան նաեւ թույլ խաղեր, ամեն դեպքում իրենք բոլորից էլ գոհ են: Այն, որ բոլորը նվիրված խաղացին, մանավանդ «Բանանցի» հետ այս վերջին՝ գավաթային խաղերը, երեւաց, որ թիմը կա, թիմն ունի բնավորություն եւ պատրաստ է խաղալու մյուս տարի:

Այն մեծ ու հետեւողական աշխատանքը, որ նոր ղեկավարության ջանքերով արդեն շուրջ մեկուկես տարի կատարվում է «Շիրակում», ի վերջո ցանկալի արդյունքներ է տալու, դրանում կասկած լինել չի կարող: Թիմի ղեկը ստանձնելու ժամանակվանից մինչեւ այսօր ի՞նչ խնդիրներ է հաջողվել լուծել, եւ ինչ խնդիրներ դեռ կան լուծելու: Մեր այս հարցին պրն Սահակյանը պատասխանեց. «Ես թիմը գլխավորում եմ անցյալ տարվա օգոստոսից: Սեպտեմբերից առաջին գործը, որ արեցինք, մարզադաշտի վերանորոգումը սկսելն էր: Դա երկար գործընթաց է, եւ չեմ էլ խոստանում, որ շուտ կավարտենք, բայց գլխավորը՝ ամենաբարդը, խոտածածկն է, եւ հիմա, խոտածածկի խնդիրը լուծելուց հետո, արդեն սկսել ենք մարզադաշտի մյուս մասերը վերակառուցել: Այդ շինարարական աշխատանքները կարող են տարիտարիուկես տեւել:

Երկրորդ խնդիրը, որ լուծեցինք, քաղաքապետարանի հետ պայմանավորվեցինք եւ ֆուտբոլի դպրոցի կառավարումը ստանձնեցինք: Այսօր բավականին շատ երիտասարդ ֆուտբոլիստներ ունենք պարապող՝ մոտ 370 հոգի, որը, կարծում եմ, Գյումրու համար բավական լավ ցուցանիշ է: Եվ փորձում ենք դպրոցում ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան գոնե մարզչական աշխատանք, որովհետեւ մյուս պայմանները լավը չեն: Թիմը չի կարող ուժեղ լինել, եթե մանկապատանեկան դպրոցը լավ չի աշխատում: Մեզ մոտ այդ դպրոցը, ի պատիվ մեր մարզիչների ասենք, նույնիսկ այստեղի վատ պայմաններում կարողանում է «Շիրակին» ֆուտբոլիստներ տալ: Տարվա ընթացքում «Շիրակ-2»-ից շատ ֆուտբոլիստներ վերցրինք «Շիրակ», նաեւ մարզչին, միաժամանակ համագործակցության պայմանագրեր կնքեցինք մի շարք կառույցների հետ: Ջորկաեֆ ընտանիքի հետ ենք համագործակցում, իրենց մոտից եկան, մեր մարզիչների հետ սիահագին աշխատանք կատարեցին, հիմա մեր մարզիչներից պիտի գնան Ֆրանսիա վերապատրաստման:

Մենք այսօր նաեւ ունենք մի լեգենդար՝ Յորոն Սենեգալից, որը Սենեգալի հավաքականներից մեկի ֆուտբոլիստ է եւ խաղամակարդակով Հայաստանի երեւի լավագույն ֆուտբոլիստներից մեկն է, մյուս տարի, համոզված եմ, ինքը շատ կզարմացնի: Մեր առաջնությունում էլ կան ֆուտբոլիստներ, որոնք ցանկություն ունեն գալ «Շիրակ», կան այնպիսիք էլ, որոնց մենք ենք ուզում, երեւի մի տասը-տասնհինգ օրից ավելի կոնկրետ կարող եմ ասել: Ինչպես գիտեք, դարպասապահ արդեն բերեցինք, «Միկա»-ի երկրորդ դարպասապահին:

Եվ հիմա ամենակարեւոր խնդիրը, որ լուծվում է Գյումրիում, ֆուտբոլի ակադեմիա է կառուցվում, «Մուշ» թաղամասում, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան է կառուցում: Այնտեղ լինելու է Հայաստանում առաջին տաքացվող արհեստական խոտածածկով դաշտը: Երեւանում երկու արհեստական խոտածածկով դաշտ կա, բայց սա լինելու է միակը, որը նաեւ տաքացվող է: Այսինքն ձմռան պայմաններում թե՛ մեր մանկապատանեկան թիմերը, թե՛ «Շիրակը», «Շիրակ-2»-ը կկարողանան նորմալ պարապմունքներ անցկացնել: Բացի այդ, կառուցվելու է եւս 4 դաշտ: Այսինքն կլինի Հայաստանի մարզերի համար բացառիկ կառույց: Մայիսին առաջին դաշտն ըստ երեւույթին պատրաստ կլինի խաղալու համար: Եվ այդ դաշտից հետո, համոզված եմ, մեր մանկապատանեկան տարիքի ֆուտբոլիստների թիվը 400-ից էլ կավելանա, եւ բնականաբար աշխատանքների որակն էլ բավական կլավանա, ու որպես արդյունք՝ կունենանք ավելի որակյալ ֆուտբոլիստներ»:

Անդրադառնալով մյուս տարվա պլաններին, Արման Սահակյանը նշեց, թե շատ լավ գյումրեցի երիտասարդներ կան, որոնց պետք է անպայման հնարավորություն տալ խաղալու: Մինչեւ մարտ թիմը հավաքներ է անցկացնելու, եւ չեն բացառում էլի արտասահմանցի մի քանի ֆուտբոլիստներ ունենալը: Եղանակային լավ պայմանների առկայության դեպքում հույս ունեն մարտի 15-ին տարվա առաջին հանդիպումը անցկացնել արդեն նորոգված սեփական մարզադաշտում, հակառակ դեպքում երեւի այստեղ խաղան ապրիլից: Մյուս տարի նաեւ նախատեսվում է Գյումրու մարզադաշտից ֆուտբոլային հանդիպումների ուղիղ հեռարձակում կազմակերպել:

«Հաջորդ մրցաշրջանի համար մեր խնդիրները նույնն են, ինչ որ այս մրցաշրջանի համար,- ասաց «Շիրակ» ակումբի նախագահը:- Իհարկե՝ նախ նվաճել գավաթը, որպես ամենաարագ ճանապարհը Եվրոպա խաղալու: Փաստորեն հիմա, իմ գնահատմամբ, ամենադժվար մրցակցին՝ «Բանանցին» անցանք, խաղալու ենք կիսաեզրափակիչ «Միկայի» հետ, համոզված եղեք, որ մեր ֆուտբոլիստներն էլ են դրա համար ուրախ, որովհետեւ ռեւանշի խնդիր ունենք: Բավական ռեալ ենք համարում գավաթում հաջողության հասնելը, իսկ առաջնությունում՝ երրորդ տեղ: Ես համոզված եմ, որ լրիվ հնարավորություն կունենանք պայքարելու, որովհետեւ թիմը վերադառնում է Գյումրի խաղալու, իսկ մեր թիմի համար սեփական դաշտը խիստ ավելի մեծ նշանակություն ունի, կարծում եմ, քան մյուս թիմերի համար»: «Շիրակի» երկրպագուների բանակը, ակումբի նախագահի հավաստմամբ, Հայաստանում ամենամեծն է ու ամենանվիրվածը: Դա եւս ֆուտբոլիստներին մեծ ուժ է տալիս, ինչը մյուս տարի, մարզադաշտը բացվելուց հետո, ավելի առարկայական կերեւա:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

ԴԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

# «Վիվասել-ՄՏՍ»-ի գործարար կառավարման փորձը արդյունք է տալիս

## Ռալֆ Յիրիկյանի հանդիպումը կառավարման ակադեմիայի ուսանողների հետ

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը կազմակերպության գործարար կառավարման փորձն է ներկայացրել կառավարման ակադեմիայում:

«Ղեկավարի համար կառավարման համակարգի ճկունությունը նույնքան կարեւոր է, որքան պրոֆեսիոնալ կադրերի հավաքագրումը: Երբ գործի հիմքում կան պատասխանատվություն, վստահություն եւ հարգանք՝ անխուսափելի է նաեւ հաջողությունը: Առաջընթաց են արձանագրում այն ընկերությունները, որոնց հաջողվում է հասարակության հանդեպ պատասխանատվությամբ դիմակայել մրցակցությանը եւ ժամանակի մարտահրավերների թելադրած դժվարություններին», ապագա մենեջերներին ասել է ընկերության գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

«Վիվասել-ՄՏՍ»-ը համարում է, որ կառավարման ճիշտ ընտրված մոդելը հաջողության գրավականն է. այն ենթադրում է գործարար էթիկա, աշխատակիցների եւ հասարակության հանդեպ պատասխանատվություն, երկարաժամկետ ռազմավարություն եւ ազնիվ մրցակցություն: Ընկերությունը միշտ առաջնորդվել է կորպորատիվ պատասխանատվության վրա խարսխված կառավարման մշակույթով:



Հայաստանի առաջատար բջջային օպերատորի կառավարման փորձն օրինակ կարող է լինել կառավարման ակադեմիայի ուսանողների համար: Դասախոսությանը հաջորդած հարցուպատասխանով ապագա մասնագետները տեղեկացել են, որ տնտեսության մեջ առաջընթաց ապահովելու հարցում բարի համբավ վաստակելը նույնքան կարեւոր է, որքան որակի ապահովումը, շուկայի վերլուծությունն ու կադրերի շարունակական վերապատրաստումը:

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ, ԿԱՐԵՎՈՐ Է

«Ծխնելույզագործական մասնագիտացված սերվիս» ՍՊԸ-ն նպատակահարմարության տեսակետից հայտնում է.

Համաձայն բնական գազի օգտագործման կանոնների պահանջների, այն շինություններում, որտեղ տեղադրված են կենցաղային գազասարքեր, այդ թվում ջրատաքացուցիչ, ջեռուցման սարք, օգտագործման ժամանակ՝ այրման արգասիքների հեռացման համար, անհրաժեշտ է գազի սարքավորման ծխանցքին հավասար կամ մեծ տրամաչափ ունեցող ծխատար, օդի հեռացման համար արտածող օդատար շենքի տանիքից վեր դուրս բերված՝ պահանջվող բարձրության:

Մարդկանց անվտանգությունը ապահովելու նպատակով «Ծխնելույզագործական մասնագիտացված սերվիս» ՍՊԸ-ն խորհուրդ է տալիս գազի սարքավորումներից օգտվելուց առաջ օդափոխել շինությունը, որտեղ տեղադրված է գազի սարքավորումը: Նախքան օգտվելը ստուգել ծխնելույզի քարշի առկայությունը: Քարշի առկայության դեպքում միայն օգտվել գազի սարքավորումից:

Գազասարքի օգտագործման ժամանակ ծխնելույզի քարշի նվազեցման, անսարքության թուլության ժամանակ գազի թերայրման հետևանքով առաջանում է ածխածնի օքսիդ (շմոլ գազ), որը ուժեղ թունավոր գազ է և դրա աննշան քանակության առկայությունը շինությունում կարող է թունավորման պատճառ հանդիսանալ:

Խորհուրդ է տրվում նման դեպքերում մաքրել ծխնելույզը և նոր միայն օգտագործել գազասարքը:

Ծխաօդատար ուղիների մաքրման, վերանորոգման աշխատանքներ կատարելու համար կարող եք զանգահարել հեռախոսահամարով՝ 20 02 94:

Հոդվածը ընթերցելուց այն ընկալել որպես նպատակահարմարության ծանուցում:

**«Ծխնելույզագործական մասնագիտացված սերվիս» ՍՊԸ**

*Ոչ պաշտոնական հրապարակում*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով օտարվող գույքերի ցանկ* | | | | | |
| 1 | Նոր Արես 11 փողոց, թիվ 2 պոլիկլինիկայի կաթսայատուն | կաթսայատուն | 245.6 | 162.5 | 9,500,000 |
| 2 | Համբարձումյան փողոց թիվ 2/2 | կաթսայատուն | 106.3 | 79.6 | 4,250,000 |
| 3 | Աբովյան փողոց թիվ 26 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 209.5 | 19,800,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ դեկտեմբերի 22-ին ժ.16.00-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ դեկտեմբերի 22-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

Երեւանի Առեւտրա-Հումքային Բորսայի հարթակում իրականացվում է «Երեւանյան Կոկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բարոյապես եւ ֆիզիկապես մաշված, հետագա օգտագործմանը ոչ պիտանի գույքի աճուրդային վաճառք:

Աճուրդները իրականացվում են յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00 – 17.00, ք. Երեւան Ազատամարտիկների 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկություններ համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել www.borsa.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համար՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 6.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Խանջյան 28: